*Միշտ կրակեք ավելի բարձր, քան գիտեք, որ կարող եք: Մի՛ անհանգստացեք ձեր ժամանակակիցներից ավելի լավը դառնալու մասին: Փորձե՛ք ինքներդ ձեզանից լավը լինել:*

*Ուիլյամ Ֆոլքեր*

§ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ
Գ. ՉԱՈՒՇԻ  ԱՆՎԱՆ N 24 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ¦ ՊՈԱԿ-Ի

# Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն  Ծ Ր Ա Գ Ի Ր



## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

**Իբրև սկիզբ  (նախաբանի փոխարեն)**---------------------------------------------------------- էջ 3

Դպրոցի անձնագրային տվյալները --------------------------------------------------------էջ 4
Սահմանային լիցենզիաները ըստ կրթական աստիճանների---------------------------էջ 5
Զարգացման ծրագրի մշակման իրավական հիմքերը-----------------------------------էջ 6
Զարգացման ծրագրի կառուցվածքը-------------------------------------------------------էջ 7
Զարգացման ծրագրի ժամանակային ընդգրկումը-------------------------------------էջ 8
1. Բաժին 1: Իրավիճակի վերլուծություն----------------------------------------------էջ 9
1.1.Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների քանակական և որակական արդյունքները----------------------------------------էջ 11
1.2.Հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման կարիքների վերլուծություն------------------------------------------էջ 31
1.3 Համայնքի, կրթության կառավարման մարմինների շահառու կազմակերպությունների հետ համագործակցության թույլ և ուժեղ կողմերը------------------------------------------------------------------------------------------------------էջ 34
1.4. Հաստատության խորհրդակցական մարմինների ուժեղ և թույլ կողմերը---էջ 41
1.4.1 Մանկավարժական խորհուրդներ-------------------------------------------------էջ 42
1.4.2 Առարկայական մեթոդական միավորումներ------------------------------------էջ 44
1.4.3 Ծնողական խորհուրդ------------------------------------------------------------------էջ 49
1.4.4 Աշակերտական խորհուրդ---------------------------------------------------------------էջ 50
1.5 Շենքային պայմանների նպատակային գործածության, ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն-------------------------------------------------------------------------------էջ 53
2 Բաժին 2: Նպատակներ և խնդիրներ-----------------------------------------------էջ 61
**Վերջաբան**-------------------------------------------------------------------------------------էջ 85
**Դիտարկումներ**--------------------------------------------------------------------------------էջ 86
**Հավելված**---------------------------------------------------------------------------------------էջ 87

# ԻԲՐԵՎ ՍԿԻԶԲ



Օրը սկսվում է արևածագից, ավարտվում՝ արևամուտին: ՈՒսուցչի օրն սկսվում է արևածագից, ավարտվում…. Բայց ավարտվո՞ւմ է այն… Իմ կարծիքով՝ ուսուցչի օրը հանգչում է աշակերտական տետրակի կարմիր և կանաչ հետքերին, ծնողական և աշակերտական վիրտուալ շփման աշխատանքային հարթակները ողողող սիրաշատ մեկնաբանություններում,դասագրքերի էջերում թաքնված չորացած ծաղկաթերթերին, շրջանավարտների լուսանկարներով ալբոմի թերթերին, դպրոց կոչվող տաճարի չարչրկված ճանապարհին…..

Իսկ առավոտյան, երբ արևն սկսում է իր անվախճան երթը, ուսուցիչը նորից շտապում է՝ սկսելու ուխտավորի իր ամենօրյա աղոթքը, որ աշխարհը խաղաղ լինի, կյանքը՝ երջանիկ, երեխան ծնող ունենա, ծնողը՝ աշխատանք ու բարեկեցություն, որ ընտանիքը տանիք ունենա ու հայրենիք, իսկ հայրենիքը՝ անթիվ, անհամար երեխաներ, որ այդ երեխաները հայեցի կրթություն ունենան, հայն էլ՝ կրթված, մրցունակ, արժեհամակարգով ուժեղ սերունդ….

Իսկ ուսուցչապետի խնդիրն է, որ դպրոցը դեմք ունենա ու դիմագիծ, ուսուցիչը աշխատանք ունենա ու հաճելի աշխատավայր, աշակերտը սիրով գա դպրոց և սեր ու ջերմություն տանի տուն, շրջանավարտը գիտելիք, հմտություն ունենա, սկզբունք ու դիրքորոշում, լինի կարողունակ , աշխարհում լինի մրցակցելի, տնօրենը անուն ունենա ու հեղինակություն….

Դ Պ Ր Ո Ց Ի  Ա Ն Ձ Ն Ա Գ Ր Ա Յ Ի Ն   Տ Վ Յ Ա Լ Ն Ե Ր Ը


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՏԱՐՐԱԿԱՆ հանրակրթական (ծրագրի անվանումը)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0242

Սույնով վավերացվում է, որ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳԵՎՈՐԳ ՉԱՈՒՇԻ ԱՆՎԱՆ N 24 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

ք. Վանաձոր, Ներսիսյան փողոց թիվ 1ա
(գտնվելու վայրը)

ք. Վանաձոր, Ներսիսյան փողոց թիվ 1ա
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Տարրական հանրակրթական (ծրագրի անվանումը)

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ (ստորագրությունը) Ա. Աշոտյան (անունը, ազգանունը)

Կ.Տ. « 30 » մայիսի 2011 թ.

Անժամկետ
(լիցենզիայի գործողության ժամկետը)

Պետական գրանցում - Թիվ 26.210.02098, 22.01.2003թ.
Վկայական - N 09112023-06-0095
Գրանցման հասցեն –
ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Ներսիսյան 6
Հեռախոսահամարը – 0322 48396
Էլեկտրոնային հասցեն – vanadzor24@schools.am
Կայքի հասցեն - http://vanadzor24.schools.am/
Կանոնադրության գրանցում – 19.09.2017թ.

**ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԵՂԵՐԻ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԸ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ**


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՀԻՄՆԱԿԱՆ հանրակրթական
(ծրագրի անվանումը)
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0236

Սույնով վավերացվում է, որ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳԵՎՈՐԳ ՉԱՈՒՇԻ ԱՆՎԱՆ N 24 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)
ք. Վանաձոր, Ներսիսյան փողոց թիվ 1ա
(գտնվելու վայրը)
ք. Վանաձոր, Ներսիսյան փողոց թիվ 1ա
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Հիմնական հանրակրթական
(ծրագրի անվանումը)
հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ (ստորագրությունը) Ա. Աշոտյան (անունը, ազգանունը)

Կ.Տ. «30» մայիսի 2011 թ.

Անժամկետ
(լիցենզիայի գործողության ժամկետը)

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՄԻՋՆԱԿԱՐԳ հանրակրթական
(ծրագրի անվանումը)
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0195

Սույնով վավերացվում է, որ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳԵՎՈՐԳ ՉԱՈՒՇԻ ԱՆՎԱՆ N 24 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)
ք. Վանաձոր, Ներսիսյան փողոց թիվ 1ա
(գտնվելու վայրը)
ք. Վանաձոր, Ներսիսյան փողոց թիվ 1ա
(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Միջնակարգ հանրակրթական
(ծրագրի անվանումը)
հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ (ստորագրությունը) Ա. Աշոտյան (անունը, ազգանունը)

Կ.Տ. «30» մայիսի 2011 թ.

Անժամկետ
(լիցենզիայի գործողության ժամկետը)

# ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 18.04.2023թ. 399-Ա հրամանը՝ ՛Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հավակնորդի զարգացման ծրագրի գնահատման չափանիշերը հաստատելու մասին¦
2. ՀՀ կառավարության՝ 09.02.2023թ. 181-Ն կարգը՝ §Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման¦մասին
3. ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 08.02.2024թ. 09-Ն հրամանը՝ §Պետական հանրակրթական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը

և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողականի ցուցանիշներն ու պահանջները¦ հաստատելու մասին:

4. ՀՀ կառավարության՝ 23.11.2023թ. 2039-Ն կարգը՝ §Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրվույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման¦ մասին
5. §Հանրակրթության մասին¦ ՀՀ օրենքը
6. ՀՀ կառավարության՝ 4 փետրվարի 2021թ. N 136-Ն կարգը՝ §Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման¦ մասին

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. ՀՀ Սահմանադրություն
2. ՀՀ կրթության՝ մինչև 2030թ.զարգացման պետական ծրագիր
3. Աշխատանքային օրենսգիրք
4. ՙԿրթության մասին՚ ՀՀ օրենք
5. ՙՀանրակրթության մասին՚ ՀՀ օրենք
6. ՀՀ պետական չափորոշիչ
7. Կրթության ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտեր
8. Կանոնադրություն
9. §ՀՀ հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկ¦

Հաջողությունը սկսվում է կյանքիդ առաքելությունը գտնելուց.....

Հենրի Ֆորդ

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

ԻՐԱՎԻՃԱԿԻ

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Մեր բոլոր երազանքները կիրականանան, եթե համարձակվենք հետևել դրանց:

Ուոլթ Դիսնեյ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ



## ԲԱԺԻՆ 1

## ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իրավիճակի վերլուծությունն իրականացվել է ըստ՝

- Դպրոցի ներքին գնահատման հաշվետվությունների (2020-2023թթ.)։
- Մշտադիտարկման արդյունքների (20190-2024թ.թ.)։
- Տեսչական ուսումնասիրությունների արդյունքում կազմած տեղեկանքի (2022թ.)։
- Ուսուցչական, ծնողական և աշակերտական համակազմերին ուղղված հարցաթերթիկների վերլուծության արդյունքների (հարցաթերթիկների նմուշօրինակները տե՛ս հավելված 1,2,3-ում)։
- Ըստ մանկավարժական աշխատողների կառուցվածքային միավորների (առարկայական մասնախմբեր, աջակցության խումբ, լաբորանտներ, գրադարանավար, ԴԱԿ, տեղակալներ) բանավոր հանդիպումների, զրույցների, տնօրենին կից խորհրդակցությունների արդյունքում հնչած կարծիքների և առաջարկությունների։
- Ներդպրոցական վերահսկողության շրջանակներում իրականացված վերլուծությունների։
- Ի կատարումն ՀՀ կառավարության՝ 09.02.2023թ. N 181-Ն որոշման 16(1) կետի՝ խորհրդակցական մարմինների հետ ունեցած հանդիպումներում արձանագրած առաջարկների։
- Տնօրենի, տնօրենների տեղակալների՝ մանկավարժական և կառավարման խորհրդին ներկայացված հաշվետվությունների։
- ԿԶՆԱԿ-ի կողմից 2023թ. մարտից մայիս ընկած ժամանակահատվածում Հաստատության 5-9-րդ դասարաններում §Մայրենի¦, §Հայոց լեզու¦, §Մաթեմատիկա¦ առարկաներից անցկացված մշտադիտարկումների արդյունքների։
- Մանկխորհրդի նիստերում լսված հաշվետվությունների, վերլուծությունների։
- Կառավարման մարմնին ներկայացված հաշվետվությունների։

Հաստատությունում իրականացվող գործընթացների կառավարումը և անձնակազմի ղեկավարումը իրականացվում են ըստ ներքին կազմակերպական կառուցվածքի (կցվում է)։
Բնականաբար, տնօրենի ընտրությունից հետո կառուցվածքի գծապատկերում կկատարվի համապատասխան փոփոխություն՝ ըստ կարգի։

# ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ «ՎԱՆԱՁՈՐԻ Գ. ՉԱՈՒՇԻ ԱՆՎԱՆ

## N 24 ՄԻՋՆ. ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի

Հաստատում եմ:

Կառավարման խորհրդի նախագահ՝

---------------------------------Ա. Գրիգորյան

Արձանագրություն N 1 01.09.2023թ.




Տնօրեն՝ Հ. Հովսեփյան

## 1.1.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ՈՐԱԿԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ըստ ՙՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրի՚՝ ***ծրագրի վերջնական նպատակը ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված, Հայաստանի Հանրապետության զարգացմանը միտված արդյունավետ և միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգ ձևավորելն է, որը յուրաքանչյուրին կյանքի բոլոր փուլերում հնարավորություն կտա ստանալու իր կարիքներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն, և կիրառական կրթությունը որպես հանրային բարիք՝ ապահովելով կրթության բոլոր շահակիցների մրցունակ մասնագիտական պատրաստվածությունը, ձևավորելով ակտիվ քաղաքացիական դիրքորոշումը և մասնակցային ժողովրդավարության վրա հենվող հանրային համերաշխությունը’:***

Բաժին 2, 76 կետ

Ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանները կազմվել և հաստատվել են սահմանված կարգով: Սահմանված ժամկետներում իրականացվել են ներքին գնահատման հաշվետվությունը, կառավարման և խորհրդակցական մարմիններին ներկայացվել հաշվետվություններ՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների վերաբերյալ:

***Սովորողների ուսումնառության արդյունքների քանակական վերլուծություն 2020-2021 ուսումնական տարում***

***Աղյուսակ 1***

| Ուսումնական առարկաներ | Սովորողների թիվը | | | Պետական պարտադիր առարկաներից տարեկան գնահատականների միջինը | | | 4-րդ դաս.-ում գիտելիք-ների ստուգման և 9-րդ, 12-րդ դ.դ. պետական ավարտական քնն.-երի միավորների միջինը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. |
| Հայոց լեզու | | | | | 6.6 | 6.8 | | 14.9 | 15.5 |
| Հայ գրակ. | | | | | 9.1 | 6.9 | | 13.6 | |
| Մայրենի | | | | 7.9 | | | 7.7 | | |
| Ռուսաց լեզու | | | | 8.1 | 6.9 | 7.1 | | 13.4 | |
| Անգլերեն | | | | 7.8 | 6.8 | 7.2 | | 16.4 | |
| Մաթեմատիկա | | | | 7.7 | | | 7.3 | 11.1 | 14.1 |
| Հանրահաշիվ | | | | | 5.7 | 6.9 | | | |
| Երկրաչափություն | | | | | 5.6 | 6.8 | | | |
| Հայ. աշխարհ. | | | | | 6.9 | 7.7 | | 11.8 | |
| Հայոց պատմ. | | | | | 6.7 | 7 | | 12.3 | 16.8 |
| Համաշխ. պատմ. | | | | | 7.1 | 7.3 | | | |
| Հայոց եկ. պատմ. | | | | | 7.6 | | | | |
| Հասարակագիտ. | | | | | 7.2 | 7.5 | | | |
| Ինֆորմատիկա | | | | | 7.4 | 7.3 | | | |
| Ֆիզիկա | | | | | 6.5 | 6.5 | | 12.1 | |
| Քիմիա | | | | | 6.2 | 6.9 | | 15 | |
| Կենսաբանություն | | | | | 6.7 | 7.2 | | 13 | |
| ՆԶՊ | | | | | 8.8 | 8.5 | | | |
| Եսև շրջ. աշխ. | | | | 7.8 | | | | | |
| Երաժշտություն | | | | 8.8 | | | | | |
| Կերպարվեստ | | | | 8.9 | | | | | |
| Տեխնոլոգիա | | | | 8.9 | | | | | |
| Ֆիզկուլտուրա | | | | 8.9 | 8.5 | 8.8 | | 8.8 | |
| Շախմատ | | | | 8.3 | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը | 86 | 76 | 41 | 8.3 | 7.1 | 7.3 | 7.5 | 12.9 | 15.5 |

Ըստ վերոնշյալ աղյուսակի՝ 4-րդ դասարաններում ՛Մայրենի՛, ՛Մաթեմատիկա՛ առարկաների տարեկան և գիտելիքների ստուգումների միջին համեմատական միավորները ցույց են տալիս շեղում համապատասխանաբար՝ -0,4, +0,3 միավորի չափով

9-րդ դասարաններում՝ տարեկան և քննական միավորների համեմատութական շեղումները՝ (-նշանով արտացոլված է քննական միավորի բացասական տարբերությունը, + նշանով՝ դրական դինամիկան):

՛Հայոց լեզու՛՝ -0,2,
՛Մաթեմատիկա՛՝ -0,2,
՛Հայոց պատմություն՛ ՝-0,2,
՛Ֆիզիկա՝՛ -1,4,
՛Ռուսերեն՛՝ -0.9
՛Աշխարհագրություն՛՝ -1.8
՛Գրականություն՛՝ -2.1
՛Կենսաբանություն՛ +0.5

12-րդ դասարաններում՝

՛Հայոց լեզու՛՝-0,4
՛Հայոց պատմություն՛+0,4;
՛Մաթեմատիկա՛ -0.1

Ուսումնառության հաջորդ աստիճանում՝ 9-րդ և 10-րդ դասարաններում սեպտեմբեր ամսի երկրորդ կեսին տրվել են գրավոր աշխատանքներ կամ հայտորոշիչ աշխատանքներ՝ վերլուծելու նախորդ աստիճանում ամփոփիչ գնահատման հիմնավորությունը՝ այսինք աշակերտի ստացած գիտելիքի որակը:

***Սովորողների ուսումնառության արդյունքների քանակական վերլուծություն 2021-2022 ուստարվա համար***

*Աղյուսակ 2*

| Ուսումնական առարկաներ | Սովորողների թիվը | | | Հիմնական առարկա-ներից տարեկան գնա-հատականների միջինը | | | 4-րդ դաս.-ում գիտելիք-ների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետ. ավարտ. քնն.-երի միավորների միջինը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. |
| Հայոց լեզու | | | | | 6.4 | 7.5 | | 12.6 | 14.6 |
| Հայ գրակ. | | | | | 7 | 7.9 | | 6.9 | |
| Մայրենի | | | | 7.9 | | | 7.6 | | |
| Ռուսաց լեզու | | | | 7.9 | 6.8 | 7.6 | | 6.8 | |
| Անգլերեն | | | | 7.6 | 6.8 | 8.1 | | 8.5 | |
| Մաթեմատիկա | | | | 7.4 | | | 7.8 | 12.6 | 15.1 |
| Հանրահաշիվ | | | | | 6.5 | 7 | | 6,2 | |
| Երկրաչափություն | | | | | 6.5 | 7 | | | |
| Հայ. աշխարհ. | | | | | 7 | 8.1 | | 11.7 | |
| Հայոց պատմ. | | | | | 6.1 | 6.9 | | 6 | 15 |
| Համաշխ. պատմ. | | | | | 6.3 | 7.1 | | | |
| Հայոց եկ. պատմ. | | | | | 6.7 | - | | | |
| Հասարակագիտ. | | | | | 6.5 | 7.4 | | | |
| Ինֆորմատիկա | | | | | 7.7 | 7.9 | | | |
| Ֆիզիկա | | | | | 6.4 | 7.2 | | 11 | |
| Քիմիա | | | | | 6 | 7.6 | | | |
| Կենսաբանություն | | | | | 6.5 | 7.8 | | 14.5 | |
| ՆԶՊ | | | | | 8.3 | 8.4 | | | |
| Եսևշրջ. աշխ. | | | | 7.6 | | | | | |
| Երաժշտություն | | | | 8.5 | | | | | |
| Կերպարվեստ | | | | 8.6 | | | | | |
| Տեխնոլոգիա | | | | 9 | | | | | |
| Ֆիզկուլտուրա | | | | 8.9 | 8.6 | 8.6 | | 8.6 | |
| Շախմատ | | | | 7.8 | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ընդամենը | 98 | 70 | 50 | | | | | | |

Վերլուծենք այս աղյուսակը:

4-րդ դասարաններում ՝Մայրենի', ՝Մաթեմատիկա' առարկաների տարեկան և գիտելիքների ստուգումների միջին միավորների համեմատությունը ցույց է տալիս շեղում համապատասխանաբար՝ -0,3,+0,4 միավորի չափով

9- դասարաններում՝

՝Հայոց լեզու'՝-0,1, ՝Գրականություն' ՝ -0.1

՝Ռուսերեն'՝-շեղում չկա ՝Մաթեմատիկա'՝ -0.3

՝Աշխարհագրություն՝'-1,3, ՝Հայոց պատմություն'՝ -0.1

՝Ֆիզիկա՝'-0,9, ՝Կենսաբանություն'՝ +0.8

12-րդ դասարաններում՝

՝Հայոց լեզու'՝-0,2

՝Մաթեմատիկա'-0,2

՝Հայոց պատմություն'+0,6

Ուսումնառության հաջորդ աստիճանում՝ 5-րդ և 10-րդ դասարաններում սեպտեմբեր ամսի երկրորդ կեսին տրվել են գրավոր աշխատանքներ կամ հայտորոշիչ՝ վերլուծելու գնահատաման հիմնավորությունը՝ այսինք աշակերտի ստացած գիտելիքի որակը:

***Սովորողների ուսումնառության արդյունքների քանակական վերլուծություն 2022-2023 ուստարվա համար***

***Աղյուսակ 3***

| Ուսումնական առարկաներ | Սովորողների թիվը | | | Հիմնական առարկաներիցտարեկան գնահատականների միջինը | | | 4-րդ դաս.-ում գիտելիք-ների ստուգման և 9-րդ, 12-րդ դ.դ. պետական ավարտ. քնն.-երի միավորների միջինը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. |
| Հայոց լեզու | | | | | 6.4 | 7.6 | | 12.5 | 16 |
| Հայ գրակ. | | | | | 6.5 | 7.7 | | 13.2 | |
| Մայրենի | | | | 8.1 | | | 7.5 | | |
| Ռուսաց լեզու | | | | 7.8 | 7 | 7.9 | | 14.1 | |
| Անգլերեն | | | | 7.6 | 6.9 | 7.5 | | 16.4 | |
| Մաթեմատիկա | | | | 7.9 | | | 6.4 | | 15.2 |
| Հանրահաշիվ | | | | | 6.2 | 6.5 | | 13.3 | |
| Երկրաչափություն | | | | | 6.1 | 6.4 | | | |
| Հայ. աշխարհ. | | | | | 6.9 | 8.2 | | | |
| Հայոց պատմ. | | | | | 6.5 | 7.4 | | 12.8 | 16.3 |
| Համաշխ. պատմ. | | | | | 6.8 | 7.4 | | | |
| Հայոց եկ. պատմ. | | | | | 7.1 | | | | |
| Հասարակագիտ. | | | | | 6.7 | 6.5 | | | |
| Ինֆորմատիկա | | | | | 7.8 | 8.3 | | | |
| Ֆիզիկա | | | | | 6.8 | 6.8 | | 10 | |
| Քիմիա | | | | | 6.2 | 7.3 | | | |
| Կենսաբանություն | | | | | 6.9 | 7.6 | | 13.6 | |
| ՆԶՊ | | | | | 8.1 | 8.3 | | | |
| Եսև շրջ. աշխ. | | | | 8.1 | | | | | |
| Երաժշտություն | | | | 8.9 | | | | | |
| Կերպարվեստ | | | | 8.8 | | | | | |
| Տեխնոլոգիա | | | | 8.9 | | | | | |
| Ֆիզկուլտուրա | | | | 8.9 | 8.6 | 8.8 | | 8.7 | |
| Շախմատ | | | | 8.2 | | | | | |
| Ընդամենը | 71 | 82 | 48 | 8.3 | 6.9 | 7.5 | 7 | | 15.7 |

Վերլուծենք այս աղյուսակը:
4-րդ դասարաններում ՛Մայրենի՛, ՛Մաթեմատիկա՛ առարկաների տարեկան և գիտելիքների ստուգումների միջին միավորի համեմատական շեղումը՝ համապատասխանաբար՝ -0,6 -1,5 միավորի չափով
9-րդ դասարաններում՝

| | | | |
|---|---|---|---|
| ՛Հայոց լեզու՛՝- | 0,1, | ՛Գրականություն՛ | +0.2 |
| ՛Ռուսերեն՛՝ | -0,3 | ՛Մաթեմատիկա՛ | +0.5 |
| ՛Հայոց պատմություն՛-0,1, | | ՛Կենսաբանություն՛ | -0.1 |
| ՛Ֆիզիկա՛՝ | -1,8 | | |

12-րդ դասարաններում՝

| | |
|---|---|
| ՛Հայոց լեզու՛՝+0,4 | ՛Հայոց պատմություն՛ +0.7 |
| ՛Մաթեմատիկա՛+0,2 | |

Վերը նշված քանակական տվյալների համաձայն՝ կատարվել է նշված երեք ուսումնական տարվա՝ ըստ կրթական աստիճանների ավարտական դասարաններում սովորողների տարեկան, գիտելիքների ստուգումների, քննական արդյունքների համեմատական վերլուծություն, որի արդյունքները՝ աղյուսակ 4-ում:

***Աղյուսակ 4***



Աղյուսակ 5




Աղյուսակ 6




4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱՑՎԱԾ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 7



***Աղյուսակ 8***




***Աղյուսակ 9***




***Աղյուսակ 10***




**9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԸՆԴՀԱՆՐԱՑՎԱԾ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

*Աղյուսակ 11*




*Աղյուսակ 12*




*Աղյուսակ 13*




*Աղյուսակ 14*




## 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

*Աղյուսակ 15*




ԿՁՆԱԿ-ի կողմից 2023 թվականի մարտ-մայիս ամիսներին 5-9-րդ դասարաններում իրականացվել են մշտադիտարկումներ 'Մայրենի', 'Հայոց լեզու', և 'Մաթեմատիկա', 'Հանրահաշիվ' առարկաներից:
Ստորև ներկայացվում է մշտադիտարկումների քանակական և որակական վերլուծություն դիագրամների տեսքով:

## ՄԱՅՐԵՆԻ, ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

**Ամեն մեկը պետք է իր պարտքը համարի ուսումնասիրել հայոց լեզուն, գրագետ գրել հայերեն, անկախ նրանից՝ ինչպիսի տոկոս է կազմում նրա մեջ հայկական արյունը:Այդ տոկոսը ոչինչ չի նշանակում: Մենք փոխանցում ենք մեր սրունդներին ոչ թե արյուն, այլ գաղափարներ, և այդ գաղափարների մեջ ինձ համար ամենաթանկը հայոց լեզուն է:**

**Վիկտոր Համբարձումյան**

*Աղյուսակ 16*




| | աշ. թիվը | ներկա աշ. թիվ | 1,2,3 | 4,5,6 | 7, 8 | 9 ,10 |
|---|---|---|---|---|---|---|
| 17 մարտ | 96 | 92 | 4 | 20 | 28 | 40 |
| 07 ապրիլ | 96 | 89 | 5 | 30 | 23 | 31 |
| 21 ապրիլ | 96 | 91 | 22 | 26 | 25 | 18 |
| 12 մայիս | 96 | 86 | 8 | 27 | 26 | 25 |

*Աղյուսակ 17*




| | աշ. թիվը | ներկա աշ. թիվ | 1,2,3 | 4,5,6 | 7, 8 | 9 ,10 |
|---|---|---|---|---|---|---|
| 17 մարտ | 77 | 70 | 3 | 24 | 22 | 21 |
| 07 ապրիլ | 77 | 68 | 3 | 12 | 23 | 30 |
| 21 ապրիլ | 77 | 64 | 13 | 14 | 23 | 14 |
| 12 մայիս | 77 | 68 | 6 | 15 | 30 | 17 |

*Աղյուսակ 18*

## Հայոց լեզու, 7-րդ դասարաններ




| | աշ. թիվը | ներկա աշ. թիվ | 1,2,3 | 4,5,6 | 7, 8 | 9 ,10 |
|---|---|---|---|---|---|---|
| 17 մարտ | 100 | 88 | 15 | 27 | 22 | 24 |
| 07 ապրիլ | 100 | 82 | 23 | 29 | 18 | 12 |
| 21 ապրիլ | 100 | 85 | 11 | 29 | 35 | 10 |
| 12 մայիս | 100 | 81 | 17 | 33 | 18 | 13 |

17 մարտ  07 ապրիլ  21 ապրիլ  12 մայիս

***Աղյուսակ 19***

## Հայոց լեզու, 8-րդ դասարաններ




| | աշ. թիվը | ներկա աշ. թիվ | 1,2,3 | 4,5,6 | 7, 8 | 9 ,10 |
|---|---|---|---|---|---|---|
| 17 մարտ | 85 | 78 | 5 | 35 | 21 | 17 |
| 07 ապրիլ | 85 | 72 | 9 | 29 | 18 | 16 |
| 21 ապրիլ | 85 | 75 | 13 | 25 | 33 | 4 |
| 12 մայիս | 85 | 76 | 8 | 23 | 34 | 11 |

17 մարտ  07 ապրիլ  21 ապրիլ  12 մայիս

***Աղյուսակ 20***

## Հայոց լեզու ,9-րդ դասարաններ




| | աշ. թիվը | ներկա աշ. թիվ | 1,2,3 | 4,5,6 | 7, 8 | 9 ,10 |
|---|---|---|---|---|---|---|
| 17 մարտ | 82 | 70 | 4 | 24 | 27 | 15 |
| 07 ապրիլ | 82 | 61 | 16 | 21 | 17 | 7 |
| 21 ապրիլ | 82 | 65 | 10 | 21 | 26 | 8 |
| 12 մայիս | 82 | 60 | 4 | 22 | 31 | 3 |

17 մարտ  07 ապրիլ  21 ապրիլ  12 մայիս

Նույն ժամանակահատվածում նույն դասարաններում իրականացված մշտադիտարկումները **՝Մաթեմատիկա՛, ՛Հանրահաշիվ՛** առարկաներից:




*Աղյուսակ 21*




| | աշ. թիվը | ներկա աշ. թիվ | 1,2,3 | 4,5,6 | 7, 8 | 9 ,10 |
|---|---|---|---|---|---|---|
| 13 մարտ | 96 | 92 | 23 | 30 | 15 | 24 |
| 24 մարտ | 96 | 89 | 16 | 19 | 24 | 30 |
| 17 ապրիլ | 96 | 91 | 14 | 17 | 15 | 45 |
| 8 մայիս | 96 | 90 | 20 | 22 | 13 | 35 |

13 մարտ 24 մարտ 17 ապրիլ 8 մայիս

*Աղյուսակ 22*




| | աշ. թիվը | ներկա աշ. թիվ | 1,2,3 | 4,5,6 | 7, 8 | 9 ,10 |
|---|---|---|---|---|---|---|
| 13 մարտ | 78 | 76 | 22 | 32 | 20 | 2 |
| 24 մարտ | 77 | 67 | 10 | 22 | 18 | 17 |
| 17 ապրիլ | 77 | 73 | 10 | 23 | 30 | 10 |
| 8 մայիս | 77 | 64 | 10 | 28 | 15 | 11 |

13 մարտ 24 մարտ 17 ապրիլ 8 մայիս

*Աղյուսակ 23*

**Հանրահաշիվ, 7-րդ դասարաններ**




| | աշ. թիվը | ներկա աշ. թիվ | 1,2,3 | 4,5,6 | 7, 8 | 9 ,10 |
|---|---|---|---|---|---|---|
| 24 մարտ | 100 | 92 | 23 | 44 | 17 | 8 |
| 17 ապրիլ հանր. | 100 | 92 | 25 | 29 | 20 | 18 |
| 17 ապրիլ երկր. | 100 | 92 | 53 | 13 | 14 | 12 |
| 8 մայիս հանր. | 100 | 81 | 20 | 29 | 17 | 15 |
| 8 մայիս երկր. | 100 | 81 | 27 | 30 | 13 | 11 |

24 մարտ ■ 17 ապրիլ հանր. ■ 17 ապրիլ երկր. ■ 8 մայիս հանր. ■ 8 մայիս երկր.

*Աղյուսակ 24*

**Հանրահաշիվ, 8-րդ դասարաններ**




| | աշ. թիվը | ներկա աշ. թիվ | 1,2,3 | 4,5,6 | 7, 8 | 9 ,10 |
|---|---|---|---|---|---|---|
| 13 մարտ հանր. | 82 | 79 | 12 | 35 | 22 | 10 |
| 24 մարտ երկր. | 82 | 73 | 25 | 31 | 13 | 4 |
| 17 ապրիլ հանր. | 84 | 75 | 12 | 28 | 19 | 16 |
| 17 ապրիլ երկր. | 84 | 75 | 45 | 15 | 13 | 2 |
| 8 մայիս հանր. | 82 | 64 | 6 | 35 | 12 | 11 |
| 8 մայիս երկր. | 82 | 64 | 30 | 19 | 11 | 4 |

13 մարտ հանր. ■ 24 մարտ երկր. ■ 17 ապրիլ հանր.
17 ապրիլ երկր. ■ 8 մայիս հանր. ■ 8 մայիս երկր.

*Աղյուսակ 25*

**Հանրահաշիվ, 9-րդ դասարաններ**




| | աշ. թիվը | ներկա աշ. թիվ | 1,2,3 | 4,5,6 | 7, 8 | 9 ,10 |
|---|---|---|---|---|---|---|
| 13 մարտ հանր. | 85 | 83 | 24 | 36 | 6 | 17 |
| 24 մարտ երկր. | 85 | 80 | 14 | 33 | 26 | 7 |
| 17 ապրիլ հանր. | 85 | 76 | 9 | 20 | 26 | 21 |
| 17 ապրիլ երկր. | 85 | 76 | 27 | 36 | 4 | 9 |
| 8 մայիս հանր. | 85 | 76 | 6 | 14 | 26 | 30 |
| 8 մայիս երկր. | 85 | 76 | 19 | 26 | 13 | 18 |

13 մարտ հանր. ■ 24 մարտ երկր. ■ 17 ապրիլ հանր.
17 ապրիլ երկր. ■ 8 մայիս հանր. ■ 8 մայիս երկր.

Հայտորոշիչ գրավորների արդյունքները վերլուծվել են մեթոդական միավորումներում, արվել վերլուծություններ, եզրահանգումներ, առանձնացվել թույլ և ուժեղ կողմերը: Արդյունքների որակական դինամիկան ակնհայտ է:

***Ընդհանրացված տվյալներ սովորողների առաջադիմության վերաբերյալ ըստ կրթական աստիճանների***

Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների (տոկոսի հաշվարկը. տվյալ կրթական աստիճանում «9» և «10» տարեկան գնահատական ունեցող սովորողների թվի հարաբերությունը այդ կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)

*Աղյուսակ 26*




Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը`ըստ կրթական աստիճանների (տոկոսի հաշվարկը. տվյալ կրթական աստիճանում «4», «5» և «6» տարեկան գնահատական ունեցող սովորողների թվի հարաբերությունը այդ կրթական աստիճանում սովորողների ընդհանուր թվին թվին՝ տոկոսային արտահայտությամբ)

*Աղյուսակ 27*




Ավարտման գործակից՝ ըստ կրթական աստիճանների (հաշվարկ. տարրական, հիմնական և միջնակարգ դպրոցի ավարտական դասարաններում քննություններից դրական տարեկան գնահատական ստացածների հարաբերությունը նույն դասարանների սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)

*Աղյուսակ 28*




Բուհեր ընդունված շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի համեմատ (տոկոսի հաշվարկ. 12-րդ դասարանի շրջանավարտներից բուհեր ընդունվածների հարաբերությունը 12-րդ դասարանի սովորողների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)

*Աղյուսակ 29*




Այսպիսով՝Հաստատության տնօրենի տեղակալը

- Ապահովել է և շարունակում է ապահովել ուսումնական ծրագրերի կատարումը:
- Ապահովել է հեռավար կրթության ուսումնական գործընթացի կազմակերպումը;
- 2020 թվականին COVID-19-ի համաճարակի ժամանակ իրականացված հեռավար ուսուցման արդյունքում դպրոցի ուսուցիչները ձեռք բերեցին և ամրապնդեցին տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելու կարողունակությունները, ձևավորվեց դպրոց-ընտանիք կապի մի ուրույն տեսակ, ավելի սերտ համագործակցություն՝ ի շահ կրթության իրավունքի շարունակականության:
- Իրականացրել և իրականացնում է էլեկտրոնային դասամատյանի վերահսկողությունը՝ դպրոցների կառավարման տեղեկտվական համակարգում իրեն վերապահված գործառնությունների շրջանակում:
- Ապահովել և շարունակում է ապահովել դասավանդման որակի և սովորողների՝ կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների պարտադիր նվազագույն մակարդակը:
- Ներկայացրել է առաջարկություններ ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման ուղղությամբ:
- Կանոնակարգել է սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը, կազմել դասացուցակներ:
- Ղեկավարել է առարկայական մեթոդմիավորումների աշխատանքը:
- Պահպանել է մանկավարժահոգեբանական աջակցություն ստացող յուրաքանչյուր սովորողի անհատական գործը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների անքակտելի մասը դաստիարակչական աշխատանքներն են: Դրանց պլանավորման և իրագործման հիմքում հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրերի շրջանավարտների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներն են՝ ըստ հանրակրթության պետական չափորոշչի: Դաստիարակչական աշխատանքների արդյունավետ, համագործակցային աշխատանքների իրագործման հնարավորություններն են՝

- ուսումնական առարկաների դասավանդող ուսուցիչների կողմից՝ դասի դաստիարակչական կողմին առնչվող ցանկացած մտքի իրագործումը,
- ուսուցիչների վարքագիծը հաճախ ավելի դաստիարակչական կշիռ ունի, քան ասված խոսքը,
- դպրոցի մանկավարժական աշխատողների միջև բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը, միմյանց հանդեպ հոգատարության, ապրումակցման, սիրո և համերաշխության մթնոլորտը,
- դասղեկի ժամերը,
- դասարանական և համադպրոցական միջոցառումները,
- արտադպրոցական միջոցառումները,
- բնապահպանական միջոցառումները և ձեռքբերումները,
- սպորտային միջոցառումներին մասնակցությունը,
- ռազմահայրենասիրական միջոցառումների մասնակցությունը,
- ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման կանխարգելմանն ուղղված միջոցառումները,
- երեխայի խնամքի ու դաստիարակությանն ուղղված միջոցառումները՝ դպրոցի և համապատասխան մարմինների,կոմպետենտ մասնագետների կողմից,
- մասնագիտական կողմնորոշման միջոցառումները,
- սեռական դաստիարակությանն ու առողջ ապրելակերպին ուղղված միջոցառումները,
- դեռահասների հոգեբանական առանձնահատկությունների և հոգեկան առողջությանն ուղղված միջոցառումները,
- ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումները,
- իրավական գիտելիքների ձեռբերման և հակահասարակական վարքի դրսևորման կանխարգելմանն ուղղված միջոցառումները,
- աշխարհիդի և ավագ դասարանների աշակերտների հնարավորությունների արժևորումը, առավելապես՝ ոչ միայն ուսումնառության արդյունքների կարևորությամբ, այլև տվյալ սովորողի անհատականության , բարոյակամային գծերի, հասարակական աշխատանքների ակտիվության,միով բանիվ՝ մարդկային որակների և հմտությունների կարևորությամբ ու գնահատմամբ:

Նշված միջոցառումների և ձեռքբերումների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ են ներառված 1.3 բաժնում՝ համագործակցության ուժեղ և թույլ կողմերի վերլուծության մեջ:

Արդյունքում՝ ըստ համապատասխան աշխատողների հաշվետվությունների, ներքին գնահատման հաշվետվության, տեսչական ուսումնասիրության ժամանակ կատարված դիտարկումերի, իրավապահ համապատասխան կառույցի կողմից տրվող գնահատականների, ձևավորված հանրային կարծիքի՝ կարող ենք կատարել հետևյալ որակական վերլուծությունը:

- Տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալն աշխատել է ըստ նախապես հաստատված աշխատանքային պլանի, ներառյալ լիազոր մարմնից ստացված հանձնարարականներով ընթացքում առաջացած անհրաժեշտությամբ պայմանավորված միջոցառումների կատարումը:
- Համակարգել է մասնագիտացված կրթական աջակցության ծառայությունները, մասնակցել հաստատության մանկավարժական աշխատողների կողմից սովորողների աջակցության ծառայությունների տրամադրման և նրանց կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման գործընթացի կազմակերպնամ հարցերին:

- Կազմակերպել և ղեկավարել է սովորողների դաստիարակչական, արտդասարանային, արտադպրոցական աշխատանքները, կազմակերպել և ղեկավարել է դասղեկների գործունեությունը:
- Համագործակցել է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:
- Աշխատանք է տարել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցել դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը:
- Կազմակերպել է ազգային մշակութային ժառանգության պահպանմանն ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ:
- Մասնակցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը:
- Կազմել է երկարօրյա խմբերի կարգացուցակը և աշխատանքային տարեկան պլանը: Ապահովել երկարօրյա խմբերի աշխատանքների իրականացումը:
  Որոնց արդյունքում՝
- Ուսումնասիրվող ժամանակահատվածում սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքեր չեն բացահայտվել:
- Հաստատության պատասխանատու աշխատակիցների և համապատասխան կառույցների համագործակցության արդյունքում բարձրացվել է երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության հարցը, բացառվել են բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերը: Ծնողները մշտապես իրազեկվել են երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերին:
- Տեսչական ուսումնասիրությունների ժամանակ և մեր կողմից արված դիտարկումներում բավարար են գնահատվել սովորողների ֆիզիկական, հոգևոր, սոցիալական առողջությանն ուղղված աշխատանքները:
- Հետևողական աշխատանք է տարվումսովորողների կիբեռանվտանգության և տեղեկատվական միջոցների բացասական ազդեցությունից զերծ մնալու ուղղությամբ:

Բոլոր աշխատանքներն իրականացվել են համաձայն նախապես հաստատված աշխատանքային պլանի:Եղել են ընթացքում կազմակերպած միջոցառումներ՝ կրթության կառավարման լիազոր մարմիններից ստացված հանձնարարականներին ի կատարումն:

**Ստորև ներկայացված տվյալների հավաքագրումը՝ 05.03.2024թ. դրությամբ:**

Չափորոշչային դասարաններում գործում են երկարօրյա խմբակներ:

Գործում են անվճար խմբակներ՝ §Առողջ ապրելակերպ¦ (5,7-րդ դասարաններ), §Գույների աշխարհ¦ (2-րդ դասարան), §Կար ու ձև¦ (5-րդ դասարան), §Հայրավանք¦ երգչախումբ (2-րդ դասարան), §Հետաքրքրաշարժ մաթեմատիկա¦ (5-րդ դասարան), §Հմուտ ձեռքեր¦ (5-րդ դասարան), §Հոգեբանի անկյուն¦ (2-րդ դասարան), §Հրաշագործ քիմիա¦ (7-րդ դասարան), §Մանկական երգչախումբ¦ (5-րդ դասարան), որոնցում ընդգրկված են 270 սովորող:

Ընթացիկ ուսումնական տարում չափորշչային (7-րդ)դասարաններում նախատեսվել են 9 նախագծային աշխատանքներ

- ՛Եղիշե Չարենցը և երաժշտությունը՛ – ինտեգրված՝ ՛Գրականություն՛, ՛Երաժշտություն՛ ուսումնական առարկաներից:
- ՛Անտեսանելի հրաշագործները՛ – ինտեգրված՝ ՛Գրականություն՛, ՛Երաժշտություն՛ ուսումնական առարկաներից:
- ՛Поговорим о музыке՛- ինտեգրված՝ ՛Ռուսաց լեզու՛, ՛Երաժշտություն՛ ուսումնական առարկաներից:
- ՛Հաղորդակցության միջոցները հին աշխարհում և դրանց արձագանքը արդի աշխարհում՛ - ինտեգրված՝ ՛Համաշխարհային պատմություն՛, ՛ԹԳՀԳ՛ ուսումնական առարկաներից:
- ՛Նորաձևության գույները աշնանային համայնապատկերում, միջլեզվական քերականական իրողություններ՛ - ինտեգրված՝ ՛Հայոց լեզու՛, ՛Ռուսաց լեզու՛ ուսումնական առարկաներից:
- ՛Անցյալի և ապագայի խաչմերուկում՛ - ինտեգրված՝ ՛Անգլերեն՛, ՛Ռուսաց լեզու՛ ուսումնական առարկաներից:
- ՛Երկրաչափական պատկերների միջոցով գեղագիտական ճաշակի զարգացումը նորաձևության մեջ՛ - ինտեգրված՝ ՛Երկրաչափություն՛, ՛Կերպարվեստ՛ ուսումնական առարկաներից:
- ՛Հայոց գրերի հայապահպան դերն ու եզակի գիտական ծածկագիրը՛, ինեգրված՝ ՛ Հայոց պատմություն՛, ՛Քիմիա՛ ուսումնական առարկաներից:
- ՛Մեզ շրջապատող միջավայրի գեղագիտական ընկալումը՛ - ինտեգրված՝ ՛Հասարակագիտություն՛, ՛Կենսաբանություն՛ ուսումնական առարկաներից:

Ընդհանուր առմամբ աշակերտների ընդգրկվածությունը 100 % է, ընդ որում աշակերտների ընդհանուր թվից 5 աշակերտ մասնակցել են երկրորդ նախագծային աշխատանքին: Արդեն իրականացվել է 6 նախագիծ, ընթացքի մեջ են 3-ը:
Նախագծային աշխատանքների վերաբերյալ սահմանված կարգով կատարվում է հանրային իրազեկում՝ դպրոցի պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում:

Ամփոփենք՝

- Դպրոցի տնօրենը կազմել և խորհրդի քննարկմանն է ներկայացրել ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունները սահմանված ժամկետներում:
- Կառավարման խորհրդի հավանությանն է ներկայացրել դպրոցի զարգացման ծրագիրը, ըստ տարիների՝ զարգացման ծրագրի կատարողականի մասին հաշվետվություններ:
- Մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատել է դպրոցի ուսումնական պլանները, ուսումնադաստիարաչական աշխատանքների տարեկան պլանները,սահմանված ժամկետներում՝ մանկավարժական աշատողների հաշվետվությունները:
- Կառավարման խորհրդի հաստատմանն է ներկայացրել ներքին կարգապահական,այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները:
- Ուսումնական պլանին համապատասխան՝ ապահովվել է կրթական ծրագրերի կատարումը:
- Սահմանված կարգով ձևավորվել են դպրոցի սովորողների համակազմերը:
- Սահմանված կարգով կազմակերպվել և իրականացվել է երկարօրյա ուսուցումը:

- Համաձայն սահմանված ընթացակարգի՝ դպրոցի առարկայական հանձնաժողովներն իրականացրել են առարկայական օլիմպիադաների նախապատրաստական աշխատանքները և անց են կացրել համապատասխան ժամկետներում: Բարձր արդյունք ցուցաբերած սովորողների խրախուսվել են:
- Սահմանված կարգով նախապատրաստվել և իրականացվել է ուսուցիչների ատեստավորման գործընթացը:
- Հեռավար կրթության գործընթացն իրականացվել է ըստ հաստատված ժամանակացույցի:
- Սահմանված կարգով իրականացվել է ներքին գնահատում՝ տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը: Ապահովվել է ներքին գնահատման հաշվետվության՝ համապատասխան խորհուրդներում ներկայացումը և հրապարակումը:

  Ապահովված են մասնակցային կառավարման, ղեկավարման, բազմակարծության համար անհրաժեշտ պայմանները:

Դպրոցի տնօրենության, առարկայական մասնախմբերի անդամների, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի և մանկավարժական այլ աշխատողների համագործակցված, թիմային, պլանավորված և համաչափ աշխատանքի արդյունքում՝

ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից 2022թ. իրականացվել է ստուգում դպրոցի կրթական գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով: Ստուգման արդյունքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջների խախտումներ չեն հայտնաբերվել: Կազմվել է տեղեկանք, ըստ որի՝ կրթական միջավայրի գնահատման ձևաթղթում ուսումնական միջավայրը գնահատվել է §գերազանց¦, ֆիզիկական միջավայրը՝ §շատ լավ¦, ռիսկի ընդհանուր միավորը՝ §0¦:

Դպրոցն ունի կայուն, բարձր վարկանիշ:

Կառավարման ժողովրդավարական, մասնակցային սկզբունքների արդյունքում մանկավարժական աշխատակիցներն իրենց զգում են արժևորված:

Դպրոցը գտնվում համայնքի՝ սոցիալապես անբարենպաստ, նաև շատ առումներով՝ անբարեկարգ տարածքում, բայց աշակերտների քանակի դինամիկան ցույց է տալիս, որ որևէ հեռավորության կամ տարածքային անբարեկարգության գործոն չի խանգարում աշակերտների թվաճին:

Աշակերտների թվային աճը վերջին 5 տարում

| | |
|---|---|
| 2019-2020թթ. - 878 | 2022-2023թթ. - 949 |
| 2020-2021թթ.- 918 | 2023-2024թթ. - 950 |
| 2021-2022թթ. - 932 | |

**Աղյուսակ 30**




Վերջին երկու տարիներին երկու անգամ ավելացվել է սահնամանային հնարավորությունները

## Լիցենզիայով սահմանված տեղերի փոփոխություն

30.05.2011թ. 617-Ա/Ք հրաման
Տարրական-184
Հիմնական -292
Միջնակարգ (լրիվ) -154

01.06.2021թ. 671-Ա/2 հրաման
Տարրական-360
Հիմնական -410
Միջնակարգ (լրիվ) -154

30.08.2021թ. 1413-Ա/2 հրաման
Տարրական-360
Հիմնական -430
Միջնակարգ (լրիվ) -196

**Աղյուսակ 31**



Սերտ է կապը դպրոցի և շրջանավարտների միջև, շրջանավարտները մասնակցում են դպրոցի համադրոցական միջոցառումներին, հիշատակի, խոնարհումի արարողություններին, որպես կայացած մասնագետներ՝ հաճախ աշակերտների համար կազմակերպում են հանդիպումներ, կլոր սեղաններ, ինչը նաև մասնագիտական կողմնորոշման հնարավորություն է:

Դպրոցի մանկավարժական կազմի 28 %-ը դպրոցի շրջանավարտներ են:

**Աղյուսակ 32**




Ուսումնադաստիարակչական աշխատանքների որակական վերլուծությունից առանձնացվել են հիմնախնդիրներ, որոնք որպես հետագա զարգացման ծրագրի նպատակ և խնդիրներ՝ ներառվել են ծրագրի 2-րդ բաժնում:

## 1.2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տեղեկություններ մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման ներկա իրավիճակի մասին:

***Աղյուսակ 33***




Նախաատեստացիոն և ՀՊՉ վերապատրաստումների մասնակցած, տարակարգ ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների քանակական տվյալներ

***Աղյուսակ 34***




Կամավոր ատեստավորման մասնակից ուսուցչների թիվը՝13

***Աղյուսակ 35***




Դպրոցի տնօրենը ավարտել է §Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների և տնօրենի տեղակալներ վերապատրաստողի¦ և §Ներառական կրթություն. կրթություն բոլորի համար¦ թեմայով վերապատրաստողի 30-ժամյա դասընթացները:

Տնօրենը և տնօրենի տեղակալները անցել են ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից իրականացված §Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների և տնօրենի տեղակալների վերապատրաստումներ¦ 30-ժամյա դասընթացը:

Մինչև ուսումնական տարեսկիզբ աշխատող բոլոր ուսուցիչները մասնակցել են ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպած առարկայական վերապատրաստումներին՝ մենթոր դպրոցներում, առկա և հեռավար ձևաչափով,ՀՊՉ-ի գործարկման վերաբերյալ:

Դպրոցում աշխատում է մենթոր ուսուցիչ՝ Նարինե Գասոյանը, ով ընդգրկվել և Լոռու մարզի ուսուցիչների համար որպես մենթոր ուսուցիչ իրականացրել է §Առողջ ապրելակերպ¦ առարկայի վերապատրաստումները: Այս պահին մասնակցում է §Գնահատում¦, §Վերջնարդյունք¦ թեմաներով ուսուցիչներին վերապատրաստելու դասընթացներին:

Այս պահին մենթոր դպրոցի հետ կիհամագործակցության արդյունքում նախապատրաստվում են 2024-25 ուսումնական տարում չափորոշչային դասարաններում աշխատող ուսուցիչների վերապատրաստման աշխատանքները:

Ըստ մանկավարժական աշխատողների կողմից առաջադրված հարցաթերթիկների մշակման, վերլուծության՝ խմբավորվել են մասնագիտական զարգացման հետևյալ կարիքները (հարցման ենթարկվածների առաջարկությունները ներկայացված են ամբողջությամբ, առանց մեր սուբյեկտիվ դիրքորոշման).

1.Կամավոր ատեստավորման նախապատրաստում.

Դպրոցում զգալի թիվ են կազմում կամավոր ատեստավորման մասնակից և շոշափելի արդյունք ցուցաբերած ուսուցիչների թիվը, ինչի մասին տեղեկություն կա թիվ 35 աղյուսակում: Առաջարկ՝ տնօրենության աջակցությամբ ստեղծել կամավորական խմբեր՝ մասնագիտական գիտելիքների խորացման, փորձի փոխանակման, ինչպես նաև բարոյահոգեբանական աջակցություն ստանալու նպատակով:

2. Լաբորանտների մասնագիտական վերապատրաստման անհրաժեշտություն. Ըստ էության՝ լաբորանտները որոշակի մանկավարժական որակավորում ունեն, սակայն բնագիտական առարկաների դասավանդման հանդեպ մոտեցման փոփոխությունները, բնագիտական փորձերի կատարման ընդրկունությունը, հաճախ աշխատողի փորձի պակասությունը անհրաժեշտություն են առաջացնում պետական մակարդակով լիարժեք վերապատրաստումների:

3. Ճիշտ է, ՀՊՉ-ի գործարկման արդյունավետության նպատակով ԿԶՆԱԿ-ի, վերապատրաստող այլ կազմակերպությունների կողմից իրականացվել են հնարավոր վերապատրաստումներ ուսուցիչների համար, բայց ըստ հարցումների՝ §Գնահատում¦ թեման կարիք ունի մշտական, հետևողական մեկնաբանման: Իրականում հնարավորության դեպքում մեթոդմիավորումներում և մանկխորհուրդներում իրականացվում են սեմինարներ, բայց ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դա բավարար չէ:

4. ԴԱԿ հաստիքը նույնպես ենթադրում է տարբեր մանկավարժական որակավորում ունեցող մանկավարժների նշանակում տվյալ պաշտոնին;Վերջին տարիներին ակտիվորեն ընթացել են տնօրեն-փոխտնօրենների վերապատրաստումներ, ԴԱԿ-երի վերապատրաստման կարիք և անհրաժեշտություն կա:

5.Աջակցության թիմը թեպետ աշխատանքի մեջ հմուտ և կազմակերպված թիմ է, բայց որպես այդպիսին մասնագիտական վերապատրաստումներ ՝ զարգացման նպատակով չեն եղել:

6.Մասնագիտական զարգացման կարիք ունի գրադարանավարը, թեպետ կոնկրետ մեր դպրոցի պարագայում գրադարանավարը սեփական միջոցների հաշվիմ մասնակցել է վերապատրաստման:

7. Դպրոցի օպերատորի հաստիքի վերանվանումը կամ որոշ դպրոցների պարագայում ներմուծումը էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետի որպես մանկավարժական հաստիք իր գործառույթների շրջանակի լայնացմամբ ենթադրում է պարտադիր վերապատրաստում, թեպետ մեր դպրոցի պարագայում անձի պատասխանատվությունն ու աշխատանքի կատարման որակը բարձր է, բայց կարիքի առաջարկը հենց աշխատողից է:

8.Տնօրենի մասնագիտացված աջակցությունների գծով տեղեկալը նորանշանակ է և համապատասխան վերապատրաստման անհրաժեշտություն ունի:

## 1.3 ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼ ԵՎ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

**Համագործակցության ոլորտները**

*Աղյուսակ 36*






## Ուժեղ կողմեր

- Դպրոցների հետ **կրթության կառավարման մարմնի և լիազոր մարմնի** հետ երկկողմանի

թղթակցությունն իրականացվում է mulberry համակարգով,ինչը հնարավորություն է տալիս տեղեկույթի, հանձնարարականների, դիմումների արագ փոխանցում, հաշվետվական և կատարողական գրություններին ի պատասխան փաստաթղթերը վերադաս մարմնին տրամադրելիս տնօրեններն ազատվում են անհարկի լիազոր մարմին գնալ-գալուց:

- **Կառավարման կոլեգիալ մարմնի** հետ համագործակցությունը՝ ըստ պարբերականության՝ նիստերի հրավիրումն է, օրակարգային հարցերի քննարկումը, սահմանված կազով ուսուցիչների, սովորողների բարեվարքության, վարքագծի պահպանման ներքին կարգապահական կանոնների հաստատումը, հաշվետվությունների ներկայացումը:

Սովորողների ավանդական տողաններին, համադպրոցական միջոցառումներին, առաջին և վերջին զանգերի միջոցառումներին մասնակցելը: Ըստ իրավիճակների (տողանների, սպորտային միջոցառումների պարգևատրումների) ժամանակ առաջանում են հարցեր, որոնց լուծման համար երբեմն կառավարման խորհրդի անդամները ցուցաբերում են ոչ կանոնադրական, անձնական աջակցություն (աշակերտներին նյութական խրախուսում, շինարարական փոքր խնդիրների լուծում և այլն):

Կառավարման խորհրդի քննարկմանն են ներկայացվում ուսումնադաստիարակչական աշխատանքային պլաններ, լսվում հաշվետվություններ, քննարկվում են մանկավարժահոգեբանական աջակցության կարիքի գնահատման արդյունքները:

- **ԿԶՆԱԿ**() **հիմնադրամի** կողմից իրականացվում են պարբերական վերապատրաստումներ, մշտադիտարկումներ, տնօրենի, տեղակալների, ուսուցիչների՝ հեռավար հարթակներով սեմինարներ, մասնագիտական առկա և հեռավար վերապատրաստումներ: ԿԶՆԱԿ-ի հետ համագործակցությունը հետևողական է, հնարավորություն է տալիս ուսուցիչների վերապատրաստման, չափորոշիչների կիրառման հետ կապված՝ ուսուցչի գիտելիքների, հմտությունների, կարողունակությունների ձևավորում, մշտական և շարունակական աջակցություն:
- **Կրթության տեսչական մարմնի** կողմից իրականացվող ստուգումները, ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս վերհանել ուսումնադաստիարակչական աշխատանքներում առկա խնդիրները, շտկել թերությունները: Տեսչական մարմնի կողմից տրված գնահատականը բարձրացնում է դպրոցի աշխատակազմի ոգին, ինքգնահատումը: Տեսչական մարմնի հետ համագործակցությունը հնարավորություն է տալիս ներքին իրավական ակտերի,կարգերի, հրամանների կատարման գործում օրինականության ապահովմանը:
- **ԿՏԱԿ-ը** (կրթության կառավարման տեղեկատվական համակարգ) ապահովում է դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգը, լիցենզիոն սահմանաչափերի փոփոխությունը, հայտագրման համակարգի սպասարկումը, տրամադրում է խորհրդատվություններ: Կառավարում է Հայաստանի կրթական ցանցը, mail.schools.am փոստային միջավայրում սպասարկում է էլեկտրոնային հասցեները, տրամադրում է 'Մայքրոսոֆթ Թիմս'-ի մուտքի տվյալներ: 'Հայկական կրթական միջավայր' պորտալում

տեղադրում է նյութեր, 'Հայկական կրթական միջավայր' ֆորումում գրանցում և վարում է թեմաներ, 'Պաշարների շտեմարան' կայքում գրանցում և տեղադրում է պաշարներ, §Հեռավար ուսուցում¦ համակարգում գրանցում, վարում է դասընթացներ: Կատարում է գրանցում §Իթվինինգ պլյուս¦ Հայաստան ծրագրում, ապահովում նախագծերի և միջոցառումների իրականացումը:

Տրամադրում է տարածքներ դպրոցական կայքերի համար, ապահովում մուտքի հնարավորություն և սպասարկում:

- **ԳԹԿ (**գնահատման, թեստավորման կենտրոն) իրականացնում է հանրակրթական հաստատությունում կրթության որակի արտաքին գնահատում, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու առկա խնդիրները, արժևորելու ձեռքբերումները և մշակելու աշխատանքի նոր ռազմավարություններ: Արտաքին գնահատման արդյունքում նաև բարոյական արժևորման են ներկայացվում բարձր արդյունք ցուցաբերած ուսուցիչները: Համագործակցությունը նպաստում է դպրոցի վարկանիշի բարձրացմանը:
- **ԴԿՏՀ (**դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ) Իրականացնում է սովորողների հաշվառում, հաշվառման վերահսկողություն, բացառում սովորողի երկակի հաշվառումը տարբեր կրթական հաստատություններում, հեշտացնում է սովորողի ընդունելությունը, տեղափոխությունը մի կրթական հաստատությունից այլ կրթական հաստատություն, իրականացնում է էլեկտրոնային միասնական կառավարում և վերահսկողություն, նպաստում աշխատանքի թափանցիկությանը, զերծ պահում հնարավոր վրիպումներից և բացթողումներից:
- **Վանաձորի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի** հետ համագործակցումը հնարավորություն է տալիս իրականացնել աշակերտների կարիքի գնահատում, հաստատության կողմից ուղարկված մասնագետների կողմից կազմակերպված սեմինարները՝ ծնողների,ուսուցիչների մասնակցությամբ, որոնք տալիս են մասնագիտական որակի բարձրացում:
- **Իրավապահ մարմինների** հետ համագործակցությունը պլանավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին և նպաստում է սովորողների մոտ նախասիրությունների, իրավական գիտելիքների ձևավորմանը, մասնագիտական կողմնորոշմանը և զերծ պահում հակահասարակական և ասոցիալ վարքագծից:

Համագործակցության կառույցներ՝

ՀՀ ոստիկանության Լոռու մարզի Վանաձորի Բազումի բաժնի անչափահասների գործերի (ԱԳ) և ընտանեկան բռնության կանխարգելման (ԸԲԿ) բաժնի հետ պարբերական հանդիպումներ, զրույց-սեմինարներ՝ §Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի կանխարգելումը¦, §Ճանապարհային երթևեկության անվտանգության կանոններ¦, §Արատավոր երևույթներ¦ թեմաներով:

ՀՀ զինվորական քննչական գլխավոր վարչության 7-րդ կայազորային բաժնի պետ Վ.Սմբատյանի հետ հանդիպումներ են կազմակերպվել ավագ և

միջին դասարանների աշակերտների հետ, առանձին, ըստ տարիքային խմբերի:

Այս համագործացությունը նպաստում է ՀՊՉի- 5-րդ բաժնի 22,40,41,48,49-րդ կետերի պահանջի իրականացմանը, այն է՝

Հասարակական համակեցության կանոններին և նորմերին հետևելը, պատասխանատու և հանրօգուտ վարքագիծ դրսևորելը:

Հանդուրժողականության, ապրումակցման և մարդասիրության ցուցաբերումը:

Հասունացման շրջանում իր և տարեկիցների հետ կատարվող ֆիզիկական, ֆիզիոլոգիական և հոգեբանական փոփոխություններին տեղեկացված լինելը, ինքնախնամքի, հիգիենայի հմտություններ ունենալը:

Դեռահասության շջանում հավանական ռիսկերը ճանաչելը և դրանցից խուսափելու և (կամ) նման իրավիճակներում կողմնորոշվելու հմտություններ ունենալը:

- **ՀՀ ԱԻՆ մարզային փրկարարական վարչության** Վանաձորի թիվ 1 հրշեջ փրկարարական ջոկատի աշխատակիցների հետ պարբերաբար կազմակերպվում են ուսումնական տագնապի վարժանքներ, տարհանումներ, սեյսմիկ պաշտպանության վարքականունների ուսուցում, որը ապահովում է ՀՊՉ-ի 4-րդ բաժնի 50-րդ կետի պահանջը, այն է՝ միջնակարգ դպրոցի շրջանավարտը պետք է՝

  Տիրապետի քաղաքացիական պաշտպանության  և առաջին օգնության հիմունքներին, ճիշտ կողմնորոշվի արտակարգ իրավիճակներում:

  ՈՄԱ հասարակական կազմակերպության հետ համագործակցությունը, ՆԶՊ առարկայի դասընթացին զուգահեռ նպաստում է ՀՊՉ-ի 5-րդ բաժնի 45-րդ կետի պահանջների իրագործմանը, այն է՝ զինվորական պատրաստվածության հիմունքներին տիրապետելը և ըստ անհրաժեշտության՝ առաջին բուժօնության ցուցաբերելը:
- **Զինկոմիսարիատի** հետ համագործակցության արդյունքում զինղեկի հետ միասին իրականացվում է նախազորահավաքային կցագրումը:
- **Բժշկական հաստատությունների** հետ համագործակցությունն ապահովվում է հիմնականում դպրոցի բուժքրոջ միջոցով, ինչպես նաև տարբեր հաստատությունների կողմից իրականացվում են աշակերտների լսողական, տեսողական և այլ խնդիրների հայտնաբերման պարբերական միջոցառումներ:
- **Սննդի տեսչական մարմնի** կողմից կատարվում են պարբեական ուսումնասիրություններ աշակերտների սննդի մատակարարման և դպրոցում սննդի կազմակերպման առկա խնդիրները վերհանելու ուղղությամբ:
- Սովորողների ընդգրկումը **համայնքապետարանի** կողմից կազմակերպվող միջոցառումներին՝ ասմունքի, պոեզիայի, երգի, պարի փառատոններին՝ ազատ ժամանցի կազմակերպման, հետաքրքրությունների նախասիրությունների բացահայտման և զարգացման լավագույն հնարավորություն է, ինչը նաև ապահովում է սովորողի զբաղվածությունը և զերծ պահում հակահասարակական արարքներ կատարելուց:

  Պարգևատրման արարողության ժամանակ բարձրանում է սովորողների ինքնագնահատականը:

Դպրոցն ակտիվորեն մասնակցում է համայքապետարանակի կողմից կազմակերպվող միջոցառումներին, համաքաղաքային շաբաթօրյակներին:

- **Կրթական տարբեր կազմակերպությունների** հետ համագործակցությունը համակողմանի է: Սովորողների համար պլանավորվում և կազմակերպվում են ճանաչողական այցեր, մասնակցում են բարձրագույն ուսումնական հաստա-տությունների կողմից կազմակերպվող առարկայական օլիմպիադաների, մրցույթների, որոնք սովորողների ազատ ժամանակի կազմակերպումից բացի մասնագիտական կողմնորոշման և ԲՈՒՀ-դպրոց կապի ամրապնդման, կրթության շարունակական ապահովման լավագույն հնարավորություններն են:
- **Դպրոցին հարող ՆՈՒՀ-երի հետ** համագործակցությունը հնարավորություն է տալիս նախապես պլանավորել նոր ուսումնական տարվա ընդունելությունը, մյուս կողմից ապահովվում է կրթության շարունականությունը: Հնարավոր է դարձնում բացահայտել պարտուսահասակ երեխաների՝ հանրակրթության մեջ չներառվելու հնարավոր դեպքերը:
- **Ռազմական ուսումնական հաստատությունների** հետ համագործակցության, զինվորական տարբեր հաստատությունների հետ շփման, զորամասերի հետ աշխատանքային համատեղ պլանների իրագործման ուժեղ կողմը արժեհամակարգով, հայրենասիրական ոգով, հայրենիքի պաշտպանության համար պատրաստ, զինվորական պատրաստվածության և առաջին օգնության հիմունքներին տիրապետող անհատի, վաղվա քաղաքացու ձևավորումն է, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշմամբ ռազմական բարձրագույն և միջին մասնագիտական հաստատություններում ուսանող ունենալը:
- **§ՆԳՆ սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն¦** ՊՈԱԿ-ի հյուսիսային տարածաշրջանային կենտրոնի հետ համագործակցության արդյունքում սովորողները և մանկավարժները մասնակցել են «Երկրաշարժից պաշտպանվելու վարքականոնները» դասընթացին:
- **Մարզական տարբեր կառույցների** հետ համագործակցությունը հնարավորություն է տալիս սովորողներին՝ կարևորել ֆիզիկական ակտիվությունը, մարզվել նախընտրած սպորտաձևով, դաստիարակում կամային գծեր՝ սպորտային տարբեր միջոցառումներին մասնակցելիս, բարձրանում է ինքնագնահատականը, զբաղվածությունը հեռու է պահում սովորողներին՝ հակահասարակական, անցանկալի վարք դրսևորելու տարիքային հակումներից, նպաստում է սովորողների ֆիզիկական զարգացմանը, առողջ ապրելակերպի սովորույթների մշակմանը, նպաստում է վաղվա հասարակության առողջ քաղաքացու ձևավորմանը:
- **Բնապահպանական միջոցառումներ**

ՀՊՉ-Ն սահմանում է միջնակարգ կրթության շրջավարտին ներկայացվող պահանջները, այն է՝

- ➢ Նախաձեռնել, պլանավորել և իրականացնել բնապահպանական միջոցառումներ:
- ➢ Վերլուծել և համադրել կայուն զարգացման և մարդկության հիմնախնդիրները և դրան փոխադարձ կապերը:
- ➢ Վերլուծել տնտեսության կառուցվածքի և զարգացման վրա ազդող հիմնական գործոնները:

- Նախաձեռնել կամ ակտիվորեն ներգրավվել տարատեսակ հանրօգուտ միջոցառումներում՝ ըստ սեփական հետաքրքրությունների:
- Վարել առողջ և անվտանգ կենսակերպ:

Այդ ուղղությամբ մեծ է դպրոցի համագործակցությունը տարբեր կրթական և հասարակական կազմակերպությունների հետ: Վերը նշված դաստիարակչական խնդիրներ լուծելուց զատ՝ աշակերտները, ուսուցիչների առաջնորդությամբ, նաև նյութական և բարոյական արժեքներ են բերում դպրոց:

- **՝Ֆրանկլինիա»** հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակում դպրոցին տրամադրեց թվով 50 հատ տնկիներ (կաղնու, ընկուզենու, վայրի տանձենու և վայրի խնձորենու):
- **ԿՃՆԱԿ հիմնադրամի** կողմից իրականացվող «Մոլորակն ունի իմ և քո օգնության կարիքը» համապետական աշակերտական բնապահպանական նախագծին դպրոցի էկոխմբակի երեխաները ներկայացան հետևյալ անվանակարգերում՝ «Շրջակա միջավայրի պահպանություն» նախագիծ և «Էկոպայուսակ» տեսանյութ անվանակարգերում և պարգևատրվեցին:
  - Դպրոցի աշակերտները մասնակցել են դասընթացի՝ «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և «Գլոբալ Սուփորթ» ՍՊԸ-ի կողմից: Սեմինարի ընթացքում ներկայացվեցին «Լեգենդներ» էկոկրթական բջջային հավելվածը, խաղը, և տեղի ունեցավ քննարկում էկոլոգիական հիմնախնդիրների վերաբերյալ կարծիքների ամփոփման և առաջարկությունների շուրջ:

8-րդ և 9-րդ դասարանների աշակերտները գրավեցին մրցանակային տեղեր:

- «Մաքրապատում» նախաձեռնության հեղինակ, Վանաձորի 24 դպրոցի շրջանավարտ Յակոբ Միկոյանը դասընթաց կազմակերպեց «Մաքուր է այնտեղ, որտեղ չենք աղտոտում, ոչ թե այնտեղ, որտեղ մաքրում են» թեմայով: Դասընթացը բնադաստիարակչական էր: Յակոբը կարևորեց ՍԵՐԸ ամեն ինչում, ուղղորդեց երեխաներին ավելի ճիշտ ու գիտակից ապրելու ուղին, բարին ու գեղեցիկը տեսնելու և կարևորելու, արժևորելու ամենասիրուն գաղափարները: Սովորողների և բնասերի միջև հարցերն ու քննարկումներն անկեղծ էին և ուսուցողական, մոտիվացնող: «Էկոաղբ» ՅԿ-ին հանձնվել է թափոններ՝ պլաստիկ շշեր 150 կգ, 45 կգ պլաստիկ գլխարկ:

  Դպրոցը որպես նվեր ստացավ մաքրապատիչներ:
- Այց **§Էյ-Թի-Փի¦**-ի բնապահպանական կենտրոն, Որտեղ սովորողները ծանոթացան և մասնակից դարձան շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներին:
- Յամագործակցություն **§Յիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն»** ՊՈԱԿ-ի հետ, ճանաչողական այց և պրակտիկ գործունեություն մասնագիտացված լաբորատորիաներում:
- Դպրոցը մասնակցեց **ՅՅ ԿԳՄՍՆ և ԱՆ** կողմից համատեղ իրականացված §Առողջ ապրելակերպ¦-ի իրազեկման արշավին: Դպրոցին հատկացված տա ղավարում համայնքի բնակիչների համար կազմակերպեցին առողջ սննդի գո վազդ, ինչպես նաև պատրաստված սնունդով հյուրասիրեցին համայնքի բնա կիչներին: Ապահովվում է առողջ և անվտանգ կենսակերպ վարելու՝ ՅՊՉ-ի պահանջը (5-րդ բաժին, 43 կետ):

- Համագործակցություն §Արևորդի¦ միջազգային բնապահպանական կազմակերպության հետ: Սովորողները մայիսին կմասնակցեն փառատոնին:
- Դպրոցը մասնակցել է **Visual Armenia Foundation/Վիզուալ Հայաստան** հիմնադրամի կողմից հայտարարված §Հանրակրթական դպրոցների տեխնիկական վերազինում¦ մրցութային ծրագրին և որպես հաղթող դպրոց պարգևատրվել թանկարժեք մրցանակով՝ **հեռուկ-բյուրեղային ինտերակտիվ էկրան-գրատախտակով:**
- **Բուհ-դպրոց կապի** շրջանակներում աշակերտները կենսաբանաէկոլոգիական հետազոտություններ են անցկացնում Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի կենսաբանաէկոլոգիական հետազոտությունների լաբորատորիայում, ագրարային համալսարանի լաբորատորիաներում, ինչը բացի մասնագիտական կողմնորոշումից՝ լրացնում է բացը, որ առկա է բնագիտական լաբորատորիաների՝ ուսումնանյութական բազայի թերբեռնվածության հետևանքով:

- **Հասարակական աշխատանքներում** (շաբաթօրյակներ, թղթի մակուլատուրայի, թափոնների հավաքման) սովորողների ընդգրկումը նպաստում է համընդհանուր ներառմանը, սոցիալիզացիային, կարևորում աշխատանքային կարողությունները, ձևավորում արժեհամակարգ, նպաստում էկոլոգիական դաստիարակությանը, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության կարողությունների մշակմանը: Հանձնված թափոնների գումարով դպրոցի հանգստի գոտում տեղադրված են գեղեցիկ և հարմարավետ նստարաններ, դրսի տարածքում տեղադրվել են աղբամաններ:
- **Մշակութային կենտրոնների, տուն- թանգարանների, արվեստի և մշակույթի գործիչների հետ <u>համագործակցությունը</u>** (ճանաչողական այցեր, էքսկուրսիաներ, վարպետաց դասեր, օլիմպիադաներ) ևս երկկողմանի է: Դրանք ապահովում են սովորողների բազմակողմանի զարգացումը, ազգային և համամարդկային արժեքների տիրապետումը, նպաստում ազգային և համաշխարհային արվեստի արժեքների նկատմամբ հարգալից և հոգատար վերաբերմունքի դրսևորման, մշակույթի իմացության և դրա հետ հաղորդակցվելու ձգտման, համաշխարհային մշակույթում հայ մշակույթի տեղի ու դերի ներկայացման, համամարդկային արժեքների համատեքստում համաշխարհային մշակույթի դերի իմացության, սովորողի՝ հայկական և համաշխարհային պատմամշակութային արժեքների ժառանգորդ լինելու կարևորության և պատասխանատու վերաբերմունքի ձևավորման չափորաշչային պահանջների ձևավորմանը:
- **<u>Արտադպրոցական հիմնարկների հետ համագործակցությունը</u>** նպաստում է սովորողի՝ հասարակության մեջ որպես քաղաքացու դերի, սոցիալական արդարության և ժողովրդավարական մշակույթի ձևավորման ձևավորման, ակտիվ դիրքորոշման ձևավորման, մասնագիտական կողմնորոշման և աշխատաշուկայում իր տեղը գտնելու չափորոշչային պահանջներին:

- **ՏՀՏ ոլորտում** համագործակցության արդյունքում 2021, 2022 թվականներին ունեցել ենք §Դիջիկոդ¦ մրցույթի §Լավագույն խաղ¦ անվանակարգի հաղթող:
  Դպրոցը մասնակցում է §Մեդիագրագիտություն¦ թեմայով ամենամյա սեմինարների: 2024 թվականին ունեցել ենք այդ սեմինարի §Թվային քաղաքացի¦ դեսպան աշակերտ:
  Դպրոցը համագործակցում է ՔՈԱՖ սմարթ կենտրոնի հետ, որի արդյունքում սոցիալապես անապահով խավի սովորողներ, ինչպես նաև ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիքների երեխաները մասնակցել և մասնակցում են անվճար խմբակների:

## Թույլ կողմեր

- Նամակագրության, փաստաթղթաբանության և տարբեր կառույցների կողմից հանձնարարականների անկառավարելի, անհաշվարկելի իրավիճակը,որոնք ուսուցչին և պաշտոնատար անձանց հաճախ շեղում են օրվա պլանավորված աշխատանքից, միշտ չէ, որ արդյունավետ են, միշտ չէ, որ համապատասխանում են սովորողի հետաքրքրություններին:
- Տնօրենի ընտրության նոր կարգով պայմանավորված՝ կառավարման խորհրդի անդամներից շատերի համար աշխատանքն այլևս դառնում է ոչ նպատակային, խորհրդի անդամները նիստերին մասնակցելու իրենց հետաքրքրությունների շրջանակը և անհրաժեշտությունը չեն տեսնում:Անհրաժեշտ են փոփոխություններ՝ կառավարման խորհրդի գործունեության, անդամներին աշխատելու շահադրդման համար:
- Համայնքապետարանի հետ շփումը սահմանափակվում է համայնքապետարանի կողմից դպրոցի մանկավարժական, աշակերտական և ծնողական համակացմերի մասնակցությունն ապահովելով: Դպրոցի կողմից առաջադրված խնդիրների լուծման հարցերում համայնքապետարանն ակտիվ չի, հաճախ չի ցուցաբերում կառուցողական մոտեցում:
- Վերապատրաստող կազմակերպությունները շատ հաճախ ուսուցիչների պարտադիր ատեստավորման ժամանակացույցը կազմելիս հաշվի չեն առնում,որ ուսուցիչները դպրոցում կարող են ունենալ ժամային մեծ ծանրաբեռնվածություն կամ լինել միակ մասնագետ:
- Ծնողական համայնքի ոչ լրիվ հետաքրքրվածությունը և ոչ միշտ պատրաստակամությունը մասնակցություն ցուցաբերելու գործում:
- Հաճախ աշակերտների տեղաշարժերը ենթադրում են ֆինանսական լրացուցիչ ներդրում,տրանսպորտային ծախսեր,որոնք ծնողների կողմից չեն ողջունվում:Դպրոցը ոչ միշտ,մանավանդ հիմա՝ֆինանսավորման նոր բանաձևով ի վիճակի չէ մեղմել այդ խնդիրը:

## 1.4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

՝Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական

խորհուրդ, առարկայական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական(հոգաբարձուների, շրջանավարտների) խորհուրդներ:

'ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական
Հաստատություն' պետական ոչ առևտրային
կազմակերպության օրինակելի կանոնադրություն¦

'ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Գ. Չաուշի անվան N24 միջնակարգ դպրոց¦ ՊՈԱԿ-Ի կանոնադրության V-րդ գլխի 75-րդ կետով սահմանվում են դպրոցի խորհրդակցական մարմինները՝

- Մանկավարժական խորհուրդ
- Առարկայական մեթոդական միավորումներ
- Ծնողական խորհուրդ
- Աշակերտական խորհուրդ

Ուժեղ և թույլ կողմերի ուսումնասիրությունները կատարվել են անձնական դիտարկումների, հարցաթերթիկների, բանավոր հարցումների, հանդիպումներում հնչեցրած կարծիքների հիման վրա և ներկայացվում են ամփոփ տեսքով:

### 1.4.1. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ստորև ներկայացված աղյուսակում արտացոլված է երեք տարիների կտրվածքով ամփոփ տեղեկատվություն մանկխորհրդի աշխատանքների վերաբերյալ

*Աղյուսակ 37*

| թ ը/կ | Ուսումնասիրված հարցը | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 | 2023-2024 (հունվար) |
|---|---|---|---|---|---|
| | Մանկավարժական խորհրդի կազմը(բաժանարարով ներկայաց-ված է սեպտեմբեր-հունվար թվային փոփոխությունը) | **74** | **75** | **71/75** | **76/75** |
| 1 | Ուսումնական տարվա համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատ. զարգացման տարեկան ծրագրի հաստատում | + | + | + | + |
| 2 | Ուսումնական պլանի հաստատում | + | + | + | + |
| 3 | Սովորողի ԿԱՊԿ-ի հաստատում, գնահատման համար մանկավարժահոգեբան. աջակց. տարածք. կենտրոն դիմելու հարցը | + | + | + | + |
| 4 | ԿԱՊԿ ունեցող սովորողի ԱՈՒՊ-ների հաստատում | + | + | + | + |
| 5 | Սոցիալապես անապահով սովորող. պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող գումարի բաշխումը | + | + | + | + |
| 6 | Առարկայական մասնախմբերի աշխատանքների ուսումնասիրություն | + | + | + | + |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7 | Հանրակրթական ուսումն. առարկաների չափորոշիչ, ծրագրերի, ուսումնական պլանների նախագծեր | + | + | + | + |
| | **Ընդունել է որոշումներ՝** | | | | |
| 1 | Դպրոցի աշխատանքային ռեժիմի, աշխատանքային շաբաթվա տևողության մասին | + | + | + | + |
| 2 | Սովորողների՝ դասարանից դասարան փոխադրվելու ամառային առաջադրանքներ տալու մասին | + | + | + | + |
| 3 | Սովորողներին քննություններին թույլատրելու գովասանագրերով պարգևատրելու մասին | + | + | + | + |
| 4 | Բացակայությունների պատճառով լրացուցիչ ստուգողական աշխատանքների, քննական առարկաների որոշման և քննությունների անցկացման ժամանակացույցի հաստատում | + | + | + | + |
| 5 | Վերաքննություն նշանակման, ուստարվա դասընթացը կրկնելու մասին | + | + | + | + |
| 6 | Շրջանավ. պետական նմուշի ավարտ. փաստաթուղթ տալու մասին | + | + | տեղեկացում | տեղեկացում |
| 7 | Դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման և հաստատման ներկայացնելու մասին | + | + | + | + |
| | Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվել են առնվազն երկու ամիսը մեկ անգամ | + | + | + | + |
| | Խորհրդի նիստից առնվազն 3 օր առաջ պատշաճ կերպով տեղեկացվել է նիստի անցկացման տեղի,ժամի, օրակարգի մասին | + | + | + | + |
| | Խորհիրդի որոշումներն ընդունվել են քվեարկության մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ | + | + | + | + |
| | Տնօրենը ապահովել է մանկխորհրդի որոշումների կատարումը և արդյունքների մասին պարբերաբար զեկուցել մանկավարժական խորհրդին | + | + | + | + |
| | Հրամանով հաստատված նոր կարգի ծանոթացում | 1 | 9 | 6 | 6 |
| | Ուսումնական խմբակների ձևավորում | | 6 | 3 | I կիս.՝8,<br>IIկս.՝9 |
| | Զեկուցումներ | 3 | 2 | 7 | 3 |
| | Տեղեկատվություն հաշվարկային աշխատավարձի հաշվարկման սկզբունքների մասին | | | 1 | 1 |
| | Ներդպրոցական վերահսկողության հիմնական ուղղությունները | | + | + | + |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | (սկսնակ, ուսուցիչներ, դասվար-դասղեկներ) | | | | |
| | Ուսանելի դասեր, միջոցառումներ, այցելություններ, մրցույթներ | | 6 | 73 | 3 |
| | Առարկայի դրվածքի ուսումնասիրություն (ուղղությունները) | | 9 | 7 | 1 |
| | Առարկաների ուսումնասիրություններ ու վերլուծություններ | | 1 | 2 | 1 |
| | Հաշվետվությունները ըստ մասնագետների | + | + | + | + |
| | Ուսումնական նախագծային աշխատանքներ | | | | 9 |
| | Օլիմպիադաների դպրոցական փուլի կազմ | + | + | + | + |

## Ուժեղ կողմեր

Պլանավորման փուլում, մինչև հաստատվելը՝ մանկավարժական խորհրդի օրակարգերը նախօրոք քննարկվում են մեթոդական միավորումներում, մանկավարժական աշխատակիցները հնարավորություն ունեն ներկայացնելու առաջարկներ:

Մանկավարժական խորհրդի հերթական նիստերը գումարվում են հստակ ժամանակացույցով, մասնակիցները հնարավորություն ունեն վաղօրոք պլանավորել իրենց անձնական գործերը:

Մանկավարժական խորհրդի որոշումների, հանձնարարականների կատարման մասին մշտապես զեկուցվում է հաջորդ նիստի սկզբում:

Մանկավարժական խորհրդի որոշումներն ու հանձնարականնները մանկավարժական խորհդի նիստից հետո հրապարակվում են բոլորին հասանելի տեղեկատուում:

Մանկավարժական խորդի նիստերն արձանագրվում են և գրառվում էլեկտրոնային շարվածքով, ինչը զգալի հեշտացնում է քարտուղարի աշխատանքը ժամանակային և կատարողական առումներով:

## Թույլ կողմեր

Մանկավարժական խորհրդի թույլ կողմ է ուսուցիչների ժամային ծանրաբեռնվածությունը. Աղյուսակ 38- ում բերված տվյալի համաձայն՝ ուսուցիչների 30 տոկոսն ունի 1 դրույք և ավելի ծանրաբեռնվածություն, երբեմն նիստերի մասնակցության ժամանակ նկատվում է պասսիվություն կամ հոգնածություն: Իհարկե, խնդիրը մասամբ լուծվում է, երբ, ըստ հնարավորության, նիստերը հրավիրվում են դպրոցականնների արձակուրդների ժամանակահատվածում:

### 1.4.2. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Դպրոցի բոլոր ուսուցիչները և ուսուցչի օգնականներն ընդգրկված են մեթոդական միավորումներում, որոնք 8-ն են: Ստորև ներկայացվում են առարկայական մասնախմբերի վերաբերյալ տվյալներ և ցուցանիշներ, որոնցով նաև

պայմանավորված են առարկայական մեթոդական միավորումների ուժեղ և թույլ կողմերը:

**Դասվարական մեթոդմիավորում (15 անդամ)**

Պարտադիր ատեստավորում – 10
ՀՊՉ վերապատրաստում - 6
Առարկայական վերապատրաստում – 12
Մաս. որակ. բարձրացման դասընթացներ -14
Տարվա լավագույնները – 1

**Դասվարական մեթոդմիավորման կազմը ըստ տարիքի**

մինչև 30 տարեկան –0
31-40 տարեկան –5
41-50 տարեկան - 6
51-55 տարեկան - 1
56 և ավելի - 1

**Ըստ աշխատանքային փորձառության**

0-5 տարի- 4
5-15 տարի -7
15 և ավելի - 4

**Հայոց լեզվի և գրականության մեթոդմիավորում (9 անդամ)**

Պարտադիր ատեստավորում – 7
ՀՊՉ վերապատրաստում - 7
Կամավոր ատեստավորում – 1
Մաս. որակ. բարձրացման դասընթացներ -3
Տարակարգ -1

**Հայոց լեզվի և գրականության մեթոդմիավորման կազմը ըստ տարիքի**

մինչև 30 տարեկան – 1
31-40 տարեկան –5
41-50 տարեկան - 1
51-55 տարեկան – 0
56 և ավելի - 2

**Ըստ աշխատանքային փորձառության**

0-5 տարի- 3
5-15 տարի - 3
15 և ավելի - 3

**Ռուսաց լեզվի մեթոդմիավորում (7)**

Պարտադիր ատեստավորում – 5
ՀՊՉ վերապատրաստում - 7
Առարկայական վերապատրաստում – 2
Մաս. որակ. բարձրացման դասընթացներ -7
Տարակարգ -1

**Ռուսաց լեզվի մեթոդմիավորման կազմը ըստ տարիքի**

մինչև 30 տարեկան – 0
31-40 տարեկան – 4
41-50 տարեկան - 0
51-55 տարեկան - 1
56 և ավելի - 2

**Ըստ աշխատանքային փորձառության**

0-5 տարի- 3
5-15 տարի - 1
15 և ավելի - 3

**Անգլերենի մեթոդմիավորում (6 անդամ)**

Պարտադիր ատեստավորում – 5
ՀՊՉ վերապատրաստում - 5
Առարկայական վերապատրաստում – 1
Կամավոր ատեստավորում – 2
Մաս. որակ. բարձրացման դասընթացներ -2

**Անգլերենի մեթոդմիավորման կազմը ըստ տարիքի**

մինչև 30 տարեկան – 0
31-40 տարեկան – 4
41-50 տարեկան - 2
51-55 տարեկան - 0
56 և ավելի - 0

**Ըստ աշխատանքային փորձառության**

0-5 տարի- 1
5-15 տարի - 3
15 և ավելի - 2

**Ֆիզմաթ մեթոդմիավորում (12 անդամ)**

Պարտադիր ատեստավորում – 11
ՀՊՉ վերապատրաստում - 11
Առարկայական վերապատրաստում – 3
Կամավոր ատեստավորում – 3
Մաս. որակ. բարձրացման դասընթացներ -3
Տարակարգ -1

**Ֆիզմաթ մեթոդմիավորման կազմը ըստ տարիքի**

մինչև 30 տարեկան – 0
31-40 տարեկան – 4
41-50 տարեկան - 2
51-55 տարեկան - 0
56 և ավելի - 6

**Ըստ աշխատանքային փորձառության**

0-5 տարի- 1
5-15 տարի - 4
15 և ավելի - 7

**Բնագիտության մեթոդմիավորում (7 անդամ)**

Պարտադիր ատեստավորում – 5
ՀՊՉ վերապատրաստում - 5
Առարկայական վերապատրաստում – 2
Կամավոր ատեստավորում – 1
Մաս. որակ. բարձրացման դասընթացներ -1
Տարակարգ -1

**Բնագիտական մեթոդմիավորման կազմը ըստ տարիքի**

մինչև 30 տարեկան – 0
31-40 տարեկան – 4
41-50 տարեկան - 3

51-55 տարեկան - 0
56 և ավելի - 0
**Ըստ աշխատանքային փորձառության**
0-5 տարի- 1
5-15 տարի - 4
15 և ավելի - 2

**Պատմության և հասարակագիտական առարկաների մեթոդմիավորում (6 անդամ)**
ՆԶՊ-ի ուսուցիչն ընդգրկված է այս մեթոդմիավորումում:
Պարտադիր ատեստավորում – 5
ՀՊՉ վերապատրաստում - 5
Մաս. որակ. բարձրացման դասընթացներ -1

**Պատմության մեթոդմիավորման կազմը ըստ տարիքի**
մինչև 30 տարեկան – 0
31-40 տարեկան – 1
41-50 տարեկան - 2
51-55 տարեկան - 1
56 և ավելի - 2
**Ըստ աշխատանքային փորձառության**
0-5 տարի- 2
5-15 տարի - 1
15 և ավելի - 3

**Ֆիզկուլտուրա, երաժշտություն, կերպարվեստ և առարկաների ուսուցիչների մեթոդմիավորում (6 անդամ)**
Պարտադիր ատեստավորում – 5
Առարկայական վերապատրաստում – 2
Կամավոր ատեստավորում – 1
Մաս. որակ. բարձրացման դասընթացներ -1

**Ֆիզկուլտուրա, երաժշտություն, կերպարվեստ և առարկաների ուսուցիչների մեթոդմիավորման կազմը ըստ տարիքի**
մինչև 30 տարեկան – 1
31-40 տարեկան – 3
41-50 տարեկան - 0
51-55 տարեկան - 2
56 և ավելի – 0
**Ըստ աշխատանքային փորձառության**
0-5 տարի- 3
5-15 տարի - 1
15 և ավելի - 2
Ուսուցիչների ժամային ծանրաբեռնվածությունը 05.03.2024թ. դրությամբ.

*Աղյուսակ 38*




## Ուժեղ կողմեր

1.Առարկայական մեթոդական միավորումները ստեղծվել են սահմանված կարգով, սահմանված կարգով հրավիրվել են նիստերը:
Արձանագրությունները գրվում են էլեկտրոնային շարվածքով, ինչը զգալիորեն թեթևացնում է նախագահի և քարտուղարի աշխատանքը:
2.Քննարկել են հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների, չափորոշչային դասարանների դասագրքերի, չտպագրված դասագրքերի հարցերը, գտել կարգավորման, անհրաժեշտ նյութերի տպագրման, բազմացման ձևերը:
3.Քննարկել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսումնական պլանը:
4.Կազմակերպել են մասնագիտական և մանկավարժամեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ՝ սկսնակ և չափորոշչային դասարաններում օգնության կարիք ունեցող մասնագետների համար:
5.Մանկավարժական խորհրդի քննարկմանն են ներկայացրել ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություններ:
6.Կատարել են ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն ներկայացրել դպրոցի տնօրենին:
7.Կազմակերպել են դպրոցական առարկայական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ:
8.Առարկայական մասնախմբերի անդամները տնօրենի հետ գտնվում են անմիջական շփման viber էլեկտրոնային հարթակում, ինչն օգնում է տնօրենությանը և մանկավարժական աշխատողներին՝ արագ, հասանելի և օպերատիվ կազմակերպել ամենօրյա, ամենժամյա աշխատանքը:
9.Առարկայական մասնախմբերի նախագահները փորձառու ուսուցիչներ են, հմուտ, պատրաստ ցանկացած անհրաժեշտության դեպքում իրենց մասնախմբի անդամներին ցուցաբերել ոչ միայն տեսական, այլև գործնական օգնություն:
10.Մասնախմբերի նիստերը հրավիրվում են ըստ նախապես հայտարարած ժամկետի և նախապես հաստատված օրակարգերով: Ուսուցիչներն ունեն հնարավորություն՝ օրակարգի վերաբերյալ ներկայացնել առաջարկ:
11.Նիստերում լսվում են մեթոդամանկավարժական, հոգեբանամանկավարժական զեկուցումներ և ցուցադրվում գործնական դասեր՝ ըստ պահանջի և կարևորության, հրատապության:
12.Առարկայական մասնախմբերի նախագահներին ունեն հնարավորություն՝ որոշակի միջոցառումների, տնօրենության կողմից ներդպրոցական վերահսկողության

շրջանակներում իրականացվող ուսումնասիրությունների շրջանակներում, ինչպես նաև տարբեր մասնախմբերի հրավերով մասնակից լինել գործընկերների նիստերին:
13.Յուրաքանչյուր ուսումնական տարի առնվազն մեկ անգամ տնօրենությունը կազմակերպում է իր մասնակցությունը նիստերին, ապա մանկավարժական խորհրդի նիստի ժամանակ փորձի փոխանակման կատարվում վերլուծություն, լավագույն փորձի մասին տեղեկատվության տարածում, բարոյական խրախուսում:

## Թույլ կողմեր

1.Փոխադարձ դասալսումների ոչ բավարար քանակ՝ ուսուցիչների ժամային ծանրաբեռնվածության առումով:
2.Բոլոր մասնախմբերը չէ, որ ունեն մեթոդական կաբինետներ կամ անկյուններ:
3.Բոլոր մասնախմբերում չէ, որ առկա է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, մասնախմբերի կազմի հաճախակի փոփոխությունը որոշակի հետք է թողնում այդ մթնոլորտի, մրցակցային առողջ հարաբերություններ ձևավորելու, միմյանց փոխօգնության պատրաստակամության առումով:

### 1.4.3. ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հաստատության ծնողական խորհուրդը մշտապես աջակցում է ուսումնա-դաստիարակչական աշխատանքներին գործընթացին, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներին, խորհրդի կազմը յուրաքանչյուր տարի համալրվում է նոր, նախաձեռնող անդամներով, որը և ավելի արդյունավետ է դարձնում խորհրդի աշխատանքները:

## Ուժեղ կողմեր

1.Հաստատության ծնողական խորհուրդը իր կազմից սահմանված կարգով ընտրել է հաստատության կառավարման խորհրդի անդամներ:
2.Քննարկել է հաստատության տնօրենի պաշտոնի հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագիրը, համադպրոցական ծնողական ժողովներում լսել տնօրենին՝ կատարված աշխատանքների մասին, ներկայացրել առաջարկություններ, կատարել դիտարկումներ:
3. Սահմանված ժամկետներում հրավիրվել են նիստեր, կազմվել արձանագրություններ:
4.Դասարանական ծնողական կոմիտեները և դպրոցի ծնողական խորհուրդը տնօրենի հետ գտնվում են անմիջական շփման մեջ՝ viber հարթակներով, ինչը արագ, օպերատիվ է դարձնում փոխադարձ շփումը, երկուստեք խնդիրների առաջադրումը, քննարկումը, ապահովում հաշվետվողականություն լուծումների վերաբերյալ:
5.Տնօրենության կամ մանկխորհրդի որոշումները, որոնք ենթադրում են ծնողական խորհրդի կամ դասարանական կոմիտեների մասնակցություն կամ կատարում, անմիջապես տեղ են ասնում ուղիղ ճանապարհով, անհրաժեշտության դեպքում՝ մեկնաբանություններով, ինչը ծնողին ազատում է անհարկի կտրվել կր աշխատանքից կամ կենցաղից: Նույն ձևով են լուծվում լիազոր կամ զեկավր այլ մարմիններից եկած, պարտադիր կատարման հանձնարարականները, ինչը ապահովում է աշխատանքի կազմակերպման արդյունավետություն:
6.Սերտ է համագործակցությունը ծնողական խորհրդի և տնօրենության հետ: Ծնողական խորհուրդը մեծ պատասխանատվությամբ է մոտենում իր առջև դրված խնդիրների լուծմանը:
7.Որևէ արտակարգ իրվիճակում (ռազմական գործողությունների ժամանակ, ԼՂ-ից բռնի տեղահանված հայրենակիցներին բարոյական և այլ աջակցություն ցուցաբերելու հարցում) ծնողական կոմիտեները և դպրոցի ծնողական կոմիտեն արագ

արձագանքել են և օգտագործել ողջ ծնողական ռեսուրսը՝ խնդիրների լուծման ճանապարհին:Դրա վառ ապացույցը քողածածկերի պատրաստման աշխատանքներն էին՝ ծնողների, աշակերտների, համայնքի ներկայացուցիչների, ուսուցիչների թիմայինհամագործակցված մասնակցությամբ:

8.Համադպրոցական և համաքաղաքային, համապետական շաբաթօրյակներին չափազանց ակտիվ ու արդյունավետ մասնակցությունը:

6.Աջակցում է տնօրենությանը՝ պարտուսահասակ երեխաների՝ հանրակրթությունից դուրս մնալու դեպքերի հայտնաբերման հարցում:

7.Ժամանակին և պարտաճանաչ հրավիրվում են ծնողական խորհրդի նիստերը, քննարկում օրակարգային խնդիրներ, համագործակցում տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի հետ:

8. Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումների՝ հանդեսների, հավաքների, երեկույթների, էքսկուրսիաների, ճանաչողական այցերի թվի դինամիկան վերջին երեք տարիներում ձգտում է անշեղ աճի և կազմում է 95%:

9.Հարցումներն ու ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսումնասիրման ենթական երեք տարիների ընթացքում ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումներին՝ (հանդեսներ, հավաքներ, երեկույթներ, էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր և այլն), մասնակից ծնողների թիվը և սովորողների տոկոսը կազմում է համապատասխանաբար 83 և 91%, (անկախ սոցիալական վիճակից), ինչը բարոյահոգեբանական մթնոլորտի, շփումների, միմյանց լավ ճանաչելու, ինքնաբացահայտվելու, արժևորվելու լավ հնարավորություն է:

## Թույլ կողմեր

1.Թույլ է համագործակցությունը աշակերտական խորհրդի հետ: Ընդհանուր հանդիպումները համադպրոցական միջոցառումների ժամանակ է կամ կոնկրետ որևէ խնդրի հարցում աշխորհրդի որևէ անդամին աջակցելն է:Որպես կրթական գործընթացի երկու շահագրգիռ կողմեր՝ անհրաժեշտ է կապ ստեղծել և ուժեղացնել այն երկու խորհրդակցական մարմինների միջև:

2.Թույլ է ստեղծագործական մոտեցումը, խնդիրների առաջադրումը.շփումները հիմնականում մեկ կամի քանի ուսուցչի վարքագծի, աշակերտի հետ ոչ պատշաճ հաղորդակցման կամ անհարկի խստապահանջության վերաբերյալ հարցերի քննարկման շուրջ են:

3.Ծնողական խորհրդի հետ հանդիպման ժամանակ թույլ է որակվել միջդասարանային շփումների մակարդակը և ծնողխորհրդի կապը դասարանական ծնողական կոմիտեների հետ:

4.Ծնողխորհորդն ակտիվ է համադպրոցական միջոցառումներին մասնակցությամբ, բայց պասսիվ կամ անտարբեր՝ աշակերտների պահվածքի, հագուստի, հաճախելիության, ուշացումերի հանդեպ, ինչպես նաև պասսիվ է մանկավարժներին խրախուսման ներկայացնելու պահանջի մեջ:

5.Թաղամասը համարվում է համայնքի սոցիալապես անբարենպաստ թաղամասերից մեկը, սոցիալական խնդիր ունեցող, ոչ լիարժեք ընտանիքները, երեխաներին տատ ու պապի խնամքին թողած և տարիներով արտերկրում գտնվող ծնողները, ծնողական խնամքից զրկված երեխաները սովորողների ընդհանուր քանակի մեջ կազմում են 25-30%: Ծնողական խորհուրդները հնարավորություն չունեն աջակցելու այդ կարգավիճակում գտնվող ընտանիքներին և երեխաներին:

6. Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունների թիվը ցածր է :

7. Հանդիպման ժամանակ ծնողխորհուրդը որպես թույլ կողմ նշել է նաև տեղեկատվության և ֆինանսական հաշվետվողականության ոչ հասանելիությունը:

### 1.4.4. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դպրոցում աշխորհրդի դերն է դպրոցական գործունեության կազմակերպմանը նպաստելը, անմիջականորեն իրենց վերաբերող հարցերի մասին սովորողների կարծիքի ազատ արտահայտումն ապահովելը և սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ հաստատության կանոնադրույթների պահպանումը: Սովորողների ինքնավարության նպատակներից առաջնայինն են համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրական ոգով դաստիարակված անձի ձևավորմանը նպաստելը, սովորողների պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը, սովորողների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտման համար բարենպաստ պայմանների ստեղծումը: Ահա այս և շատ այլ կարևոր նպատակները իրականություն դարձնելուն է ուղղված մեր դպրոցի աշխորհրդի աշխատանքը:

Ընդհանրապես մեր աշխորհուրդը դպրոցի ուժեղ կողմերից է: Դպրոցում ձևավորված դրվածքը, աշխորհրդի՝ սերնդեսերունդ փոխանցվող բարոյական նորմերը՝ պատասխանատվությունը, արժանապատիվ պահվածքը, ինքնուրույն կարծիք ունենալու և արտահայտվելու մշակույթին տիրապետելը, ինքնուրույնությունը և ստեղծարարությունը, միջդասարանային ակտիվ միջև առողջ շփումների ձևավորումը, կազմակերպվածությունը միայն որակական առաջընթաց են ապահովում յուրաքանչյուր ուսումնական տարեսկզբին ընտրված աշխորհրդի համար:

Դպրոցի աշխորհուրդը ձևավորվում է Աշխորհրդի օրինակելի կանոնադրության հիման վրա հաստատված՝ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Գ.Չաուշի անվ. N24 միջն. դպրոցի կանոնադրության հիման վրա, ընտրական հանձնախմբի կողմից կազմակերպված ընտրության արդյունքում, մեկ տարի գործունեության ժամկետով:

Յուրաքանչյուր դասարանից դասարանական ժողովի քվեարկության արդյունքում երկուական սովորող համալրում է աշխորհրդի կազմը: Այս տարվա աշխորհուրդը ձևավորվել է 6-12-րդ դասարանների 36 սովորողներից: 2022-23 ուստարում աշխորհրդի կազմի մեջ ընդգրկվել է 55 սովորող (19 սովորողով ավել): Աշխորհրդի 36 անդամից ձևավորվում է 6 հանձնախումբ՝ սոցիալական, առողջապահական, իրավակարգապահական, մշակութային, ռազմահայրենասիրական, ուսում-նադաստիարակչական:

## Ուժեղ կողմեր

1.Յուրաքանչյուր հանձնախումբ ողջ տարին աշխատում է նախապես գրված տարեկան պլանով: Ըստ անհրաժեշտության՝ հնարավոր է տարեկան պլանի որոշակի փոփոխություն:

2.Աշակերտական խորհրդի նախագահը հանձնախմբերի նախագահների տարեկան պլանների հիման վրա կազմում է իր տարեկան պլանը և առաջնորդվում դրանով:

3.Դպրոցի ԴԱԿ-ի նախաձեռնությամբ 2023-24 ուստարում աշխորհրդի հիմնական կազմին զուգահեռ աշխատում է նաև այլընտրանքային աշխորհուրդը, որի անդամ կարող է դառնալ այն սովորողը, որ ցանկություն ունի աշխատելու այդ տարվա ընտրված աշխորհրդի հետ: Այլընտրանքային աշխորհրդի անդամները նույնպես աշխատում են ըստ հանձնախմբերի և մասնակցում դպրոցի ինքնավարության գործունեության իրականացմանը:

4. Աշակերտական խորհրդի կազմակերպած միջոցառումների շնորհիվ զարգանում է սովորողների ինքնավստահությունը: Գործունեության ընթացքում սովորողները դառնում են ավելի համարձակ՝ խոսելիս և կարծիքներ արտահայտելիս:
5. Աշակերտական խորհուրդը ունի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջեր, որոնց միջոցով համայնքին և սովորողներին են ներկայացվում կատարված աշխատանքները: Ժամանակ առ ժամանակ այդ էջերում տեղադրվում են ուսումնադաստիարակչական և հայրենաճանաչողական բովանդակությամբ տեսանյութեր, որոնք պատրաստում են աշխորհրդի անդամները:
6. Աշակերտական խորհուրդը մշակել է ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերի համար հատուկ լոգո, անդամների ու ընտրական հանձնախմբի անդամների համար հատուկ կրծքանշաններ, որոնք կրում են բոլոր միջոցառումների ժամանակ:
7.Աշակերտական խորհրդի կարևոր ձեռքբերումներից է նաև համագործակցությունը այլ դպրոցների աշակերտական խուրհուրդների հետ:
8.Աշակերտական խորհրդի մյուս կարևոր ձեռքբերումը աջակցության խմբի հետ աշխատելն է: Տարիքային տարբեր խմբերի սովորողների համար հետաքրքիր սեմինարներ են կազմակերպվում հոգեբանի, սոցմանկավարժի, լոգոպեդի հետ:
9.Աշակերտական խորհրդի աշխատանքներում սովորողների առաջադիմությունը չի դիտարկվում որպես առավելություն: Երբեմն թույլ առաջադիմությամբ սովորողները ավելի պատվախնդրորեն են կատարում հանձնարարված աշխատանքները, քան գերազանց առաջադիմությամբ սովորողները:
10.Աշակերտական խորհրդում ընդգրկված տարբեր դասարանների սովորողները քաջ գիտակցում են, որ աշխորհրդի աշխատանքը թիմային է, ձևավորվում են միմյանց օգնելու և աջակցելու կարողություններ: Ձևավորված ջերմ մթնոլորտը նպաստում է սովորողների բեղմնավոր աշխատանքների իրականացմանը:
11.Յաստատության աշակերտական խորհուրդը շատ լավ է պատկերացնում իր խնդիրները և սովորողների ուսումնական գործընթացը կարողանում է հետաքրքիր, աշխույժ և բովանդակալից դարձնել:
12.Աշխորհրդի աշխատանքներում շատ է կարևորվում ԿԱՊԿՈՒ սովորողների ներգրավվածությունը: Աշակերտական խորհրդի կազմում կա ԿԱՊԿՈՒ 1 սովորող 9-րդ դասարանից: Աշակերտական խորհրդի որդեգրած սկզբունքների համաձայն՝ դպրոցում իրականացվող բոլոր ծրագրերը, բարեփոխումները, նախաձեռնություններն ու միջոցառումները պետք է հաշվի առնեն սովորողների առանձին խմբերի և անհատների կարիքները, նախատեսեն դրանց արձագանքման համապատասխան մոտեցումները:
13.Աշակերտական խորհուրդը գերազանց մասնակցություն է ունենում հասարակական աշխատանքներին՝ շաբաթօրյակներին, դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքներին, գիրք նվիրելու և ուսուցչի տոնին նվիրված ինքնակառավարման օրվան:

## Թույլ կողմեր

1.Աշխորհրդի գործունեությունը կազմակերպելու համար հրավիրված խորհրդակցական նիստերը տեղի են ունենում դասամիջոցներին (սովորողների՝ դասերից հետո զբաղվածություն ունենալու պատճառով):

2.Ըստ կարգի՝ խորհրդակցական ձայնի իրավունքով դասղեկները կարող են մասնակցել աշխորհրդի նիստերին: Սակայն դասղեկները հիմնականում պասսիվ են:

3. դպրոց-համայնք համագործակցության մեջ աշխորհրդի մասնակցությունը թույլ է:

4. Ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող սովորողներին աջակցություն աշխորհրդի կողմից չի ցուցաբերվել:

Խորհրդակցական մարմինների թույլ կողմ է, որ չնայած դպրոցի շրջանավարտների և դպրոցի սերտ կապի՝ դպրոցը չունի շրջանավարտների խորհուրդ:

Չի ձևավորված նաև հոգաբարձուների խորհուրդ:

## 1.5. ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ




Շենքային պայմանների նպատակային գործունեության նկարագրությունը և վերլուծությունն արված է՝ հընթացս տարանջատելով թույլ և ուժեղ կողմերը, որոնք առանձնացված են պայմանական գույնով (ուժեղ կողմը՝ մանուշակագույն, թույլ կողմը՝ կարմիր):

**Շենք, շինություն**

1. Տիպային շինություն է, ուսումնական գործընթացն իրականացվում է 5716,94ք.մ. մակերես ունեցող երկհարկանի շինությունում: Դրսից պարսպապատված և ցանկապատված է, ունի մետաղական դարպասներ: Շինությունից բացի՝ տարածքում առկա են երկրաշարժից հետո տեղադրված տնակներ, որտեղ կառավարության որոշմամբ սոցիալական խոցելի խավի՝ միայնակ տարեցների, խնամքի կարիք ունեցող շահառուների համար 10 տարի ժամկետով անհատույց իր գործունեությունն է իրականացնում 'Առաքելություն Հայաստան' բարեգործական կազմակերպությունը:

2. Գտնվում է խիտ բնակեցված թաղամասում: Այն պարսպով և ցանկապատով առանձնացված է փողոցից և հարակից տարածքերից:Ներկառուցված են մետաղյա դարպասներ:

3. ՈՒՆի մուտք ու ելքի հնարավորություն բոլոր 7 մասնաշենքերում՝ անվտանգ կենսագործունեության պայմաններին համապատասխան: Սահմանված ժամկետներում պարբերաբար իրականացվում են տարհանման ուսումնական վարժանքներ:

4. Տեղադրված է տեսաձայնագրման համակարգ:

5.Դպրոցի արտաքին և ներքին տարածքները ըստ պայմանագրի պարբերաբար ախտահանվում են, ձեռք են առնվում միջատների և կրծողների դեմ պայքարի միջոցները:

6. Ուսումնական գործընթացը կազմակերպվում է միահերթ:

1. Անհրաժեշտ է ապահովել կապի և արտակարգ իրավիճակների մանուալ համակարգով, տագնապի ազդանշանները տրվում են զանգի պայմանական նշաններով:

2. Անհրաժեշտություն կա հակահրդեհային համակարգի:

3. Տեղակայված է գետի հոսքին զուգահետ, մասնաշենքը հեռու է ընդամենը 50 մ :
Շինության նկուղային մասը ցածր է գետի հունից: Եղանակային աննպաստ իրավիճակում(գարնանային հեղեղումների ժամանակ) խոնավությունը թափանցում է շինության նկուղային հատված, ինչը այդ տարածքը զրկում է որևէ նպատակային օգտագործումից(օրինակ՝ապաստարան, պահեստ և այլն):

4.Շենքի հարակից մայթերը և փողոցը ենթակա են հիմնանորոգման:Դպրոցի մուտքին հարող փողոցը երկար տարիներ չի վերանորոգվել, բացակայում են երթևեկության գծանշումները, առավոտյան պիկ ժամին դեպի դպրոց երթևեկությունը կատարվում է մի քանի շարքով, առկա չեն մեքենաների կայանելն արգելող նշանները: Տրանսպորտային միջոցների վերջին տարիների առատությունը և հարակից փողոցի՝ վերը նշված խնդիրներն ստեղծում են վտանգավոր իրավիճակ թե՛ հետիոտնի, թե՛ մեքենաների համար:

**ՏՀՏ կաբինետ**

**Դպրոցն ունի ՏՀՏ մեկ կաբինետ 22 համակարգչով, ինտերնետ կապով, պրոյեկտորով: Ապահովված է նյութական արժեքների պահպանությունը և անվտանգությունը: Սենյակը փակվում է ճաղավանդակով, գործում է անվտանգության ազդանշանային համակարգ:**

**Երկրորդ հարկում տեղակայված է §Արմաթ ինժեներային¦ լաբորատորիան համապատասխան գույքով՝ եռաչափ տպիչ, 8 համակարգիչ, լազերային հաստոց:**

**Ինտերնետ կապի հզորությունն արդեն չի բավարարում, ծածկույթը՝ նույնպես; Անհրաժեշտ են նոր սերնդի համակարգիչներ:**

**Շախմատի կաբինետ**

**Դպրոցում գործում է անհրաժեշտ գույքով և զննական պարագաներով ապահովված շախմատի կաբինետ:**

**Դասասենյակներ**

1.Ուսումնական գործընթացը կազմակերպվում է դաս-դասարանային համակարգով, դասարանները տեղակայված են դասասենյակներում:

2.Օգոստոս ամսին ըստ կարգի՝ իրականացվել է ներքին գնահատում, որում արտացոլված են դասասենյակներում սեղան-նստարանների դասավորվածության, մեկ սովորողին ընկնող մակերեսի վերաբերյալ ցուցանիշները:

Ձերծ մնալով նույն աղյուսակներով ՝Զարգացման ծրագիրը’ ծանրաբեռնելուց՝ նշեմ, որ դասասենյակներում հիմնականում պահպանված են մեկ սովորողին հատկացվող տարածք ունենալու վերաբերյալ ՝Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ N2.2.4-016 սանիտարական կանոններ և նորմեր’-ով չափանիշները: 33 դասասենյակներից 14-ում ապահովված է նորմատիվ պահանջը, թվով 10 դասասենյակներում գերազանցում է մինչև 1.2 ք.մ, թվով 9 դասասենյակներում պակաս է նորմայից 0.1-0.4ք.մ- ի չափով:

3.Դպրոցն ունի ուսումնական գործընթաց կազմակերպելու լավ հնարավորություններ, որոնք օգտագործվում են լիարժեք: Դասասենյակների նախագծային հզորությունը և հաստատության սովորողների թիվը գրեթե համապատասխանում են:

4.Բնական լուսավորությունը դասասենյակներում ձախակողմյան է: Դասարաններում ապահովված է լրացուցիչ արհեստական լուսավորություն, գրատախտակների համար առկա են առանձին լուսամփոփներ:

Բնական լուսավորության գործակիցը (ԲԼԳ) դասասենյակների պատուհանից հեռավոր կետում կազմում է 1.5%: Բնական և արհեստական լուսավորություն ունեն բոլոր տարանցիկ (ռեկրեատիվ) միջանցքները, մարզադահլիճին կից հանդերձարանը, ճաշարանը, սանհանգույցները:

5.Դասասենյակների 67 %-ը վերջին երեք տարում կոսմետիկ վերանորոգվել են, թարմացվել է գույքը, գրատախտակնեւ են ձեռք բերվել, վերանորոգվել է աշակերտական գույքը:

1.Դասասենյակների 33 %-ը ենթակա է ընթացիկ նորոգման, հատակի վնասված հատվածների նորոգման, աշակերտական գույքի թարմացման:
2.Անհրաժեշտ են նոր գրատախտակներ, պահարաններ:

**Ջրամատակարարում**

Ջրամատակարարումը շուրջօրյա է, դպրոցն ապահովված է խմելու ջրով, շինության գլխավոր նախասրահում առկա է ցայտաղբյուր՝ շուրջօրյա հոսող ջրով:

Առկա է կենտրոնացված կոյուղագիծ:

Մեկ ցայտաղբյուրը հաճախ չի բավարարում աշակերտության ՝ջուր խմելու պահանջը:Անհրաժեշտ է երկրորդ ցայտաղբյուր կամ ջուր խմելու դիսպենսերներ:

**Ջեռուցում**

1.Շենքից դուրս գտնվող տարածքում կառուցված է կաթսայատուն, որտեղից կազմակերպվում է Հաստատության ջեռուցումը: Ուսումնական տարածքներում, միջանցքներում, սանհանգույցներում ջեռւցման սեզոնին ապահովվում է ջերմային ռեժիմը:Դասասենյակներում ջերմաստիճանը հիմնականում համապատասխանում է նորմային:

1.Ջեռուցումը թեպետ կենտրոնացված է, սակայն որոշ հյուսիսային տեղադրության սենյակներում, գրադարանում չի ապահովվում անհրաժեշտ ջերմային ռեժիմ,ջեռուցման մարտկոցները որոշ տեղերում չեն համապատասխանում տվյալ տարածքի շիննորմով պահանջվող քանակին, առկա են նաև ֆիզիկապես և բարոյապես մաշված, գործածության ժամկետն ապառած մարտկողներ: Վերջին երկու տարիներին մեր ուժերով լուծվել է ջեռուցման համակարգի նորացման խնդիր թվով 8 դասասենյակներում /14-ից/, ուսուցչանոցում, կաբինետում, սակայն առկա է մոտ 100 հատիկ մարտկոցի պահանջ, երկու կաբինետում՝ ջեռուցման համակարգի ապամոնտաժման և ճիշտ մոնտաժման խնդիր:

**Սանհանգույցներ**

1.Առաջին և երկրորդ հարկերում յուրաքանչյուր մասնաշենքում առկա են սանհանգույցներ, որոնցից օգտվում են տվյալ մասնաշենքում տեղակայված դասարանների սովորողները;

Սանհանգույց է առկա ուսուցչանոցում, ճաշարանում:

Սանհանգույցներում առկա են հիգիենիկ պարագաներ:

2.Սանհանգույցների վերջին վերանորոգումը եղել է 2007 թ.: Անհրաժեշտություն կա խողովակաշարերի փոփոխման, վերանորոգման: Բացակայում է կրթության առանձնահատուկ պայմաններ /հենաշարժողական խնդիր/ ունեցող սովորողի համար հարմարեցված սանհանգույցը:

**Ճաշարան**

Դպրոցն ունի բարեկարգ ճաշարան, որտեղ §Դպրոցականների սնունդ և երեխաների բարեկեցություն¦ ծրագրով (նախկինում՝ ՄԱԿ-ի պարենային ծրագրով) տաք սնունդ են ստանում 1-4-րդ դասարանների 364 սովորող:

Ճաշարանն ապահոված է տաք և սառը ջրով՝ շուրջօրյա, սնունդը կազմակերպելու համար առկա է համապատասխան սպասք, գույք, սարքավորումներ, առողջ սննդակարգին վերաբերող պաստառներ:

Ճաշասրահում առկա է կահույք՝ 180 սնվող սովորողի համար:

Պահպանված են սննդի ստացման և պահպանման բոլոր անհրաժեշտ պայմանները՝ պահեստ, սառնարաններ և սառցարաններ:

Սնունդ պատրաստելու համար առկա են գազով և էլեկտրականությամբ աշխատող վառարան-գազօջախներ: Ճաշասաhի հզորությունը բավարարում է սնվող սովորողների ½-ին, ուստի սնունդը կազմակերպվում է կայուն գրաֆիկով՝ երկու հերթով:

Ճաշարանի աշխատակիցներն ունեն սանգրքույկներ, որոնք թարմացվում են սահմանված ժամկետում՝ ըստ կարգի:

**Բուֆետ**

Առաջին հարկում գտվում է  սովորողների և աշխատակազմի համար սննդի սպասարկման կետ՝ բուֆետ, կահավորված, ապահովված ջրով և հետադարձ հոսքի պայմաններով:

**Մարզադահլիճ, մարզահրապարակ**

«Ֆիզկուլտուրա» առարկայի պարապմունքները անցկացվում են մարզադահլիճում, որտեղ վերջին վերանորոգումը եղել է 2022թ.: Դահլիճը ջեռուցվում է, ջեռուցվող սեզոնին ապահովվում է համապատասխան ջերմային ռեժիմ: Առկա են սանհանգույց, հանդերձարաններ, ուսուցիչների և գույքի համար առանձնացված սենյակ: Բավարար են տարհանման պայմանները: Մարզադահլիճն ունի մարզագույք, որը հնարավորինս համալրվում է:

Տարածքում առկա է բացօթյա մարզահրապարակ՝ որոշ մարզագույքով:

Թույլ կողմը մարզադահլիճի ծանրաբեռնվածությունն է: Ուսումնական պլանով ֆիզկուլտուրա առարկային հատկացված դասաժամերին մարզադահլիճ են մտնում երկու, երբեմն՝ երեք դասարան: Տարրական դասարանների աշակերտների համար բացակայում է ֆիզկուլտուրա առարկայի համար մարզադահլիճում պարապելու հնարավորությունը:

Մարզահրապարակը տարածքային լավ հնարավորություններ ունի սովորողների ֆիզիկական կուլտուրան գրել չափորոշչից, սակայն ունի վերանորոգման, գույքով լիարժեք համալրվելու անհրաժեշտություն:

**Բուժկետ**

Երկրորդ հարկում տեղակայված է բուժկետը՝ ապահովված անհրաժեշտ, նորմերով սահմանված գույքով  դեղորայքով:

**Լաբորատորիաներ**

Լաբորիատորիաները ունեն ամբողջական վերազինման անհրաժեշտություն

**Առարկայական կաբինետներ**

Գործում են առարկայական  6 կաբինետ;

- Ֆիզիկայի կաբինետ կից լաբորատորիայով: Դասասենյակը տեղակայված է առաջին հարկում, լաբորատոր մասում առկա է որոշակի գույք, սարքավորումներ, դասասենյակում առկա են զննական նյութեր:
- Աշխարհագրության կաբինետ կից լաբորատորիայով: Առկա են քարտեզներ, զննական նյութեր:
- Պատմության կաբինետում  առկա են համապատասխան  քարտեզներ, զննական նյութեր: Պատմահասարակագիտական առարկաների և աշխարհագրությա և ուսուցչուհին դասերը հնարավորություն ունեն դասավանդելու ՝Աշխարհացույց՝ կրթական հարթակի կողմից հայտարարված մրցույթում ձեռք բերված սմարթգրատախտակի օգտագործմամբ, որը տեղակայված է բարենորոգված գրադարանում:
- Տեխնոլոգիայի կահավորված կաբինետ, որտեղ առկա է ջուր, հետադարձ հոսքի հնարավորություն, կահույք, համակարգիչ, անհրաժեշտ սարքավորումներ, նյութեր:

Կաբինետը կահավորված է Varks.am կազմակերպության կողմից հայտարարված դրամաշնորհային մրցույթում հաղթելուց հետո ձեռք բերված դրամական միջոցներով:

- Ռուսաց լեզվի կիսվող ժամերի համար հատկացված է 2 կաբինետ, առկա է որոշ զննական նյութեր, ավելի հագեցած է տարրական դասարանների դասավանդման համար անհրաժեշտ զննական նյութերով:
- Անգլերենի կաբինետում ևս առկա են զննական անհրաժեշտ նյութեր:
- Հայոց լեզվի կաբինետը կահավորված է հայ գրողների դիմանկարներով, կահույքով, դասավանդման համար անհրաժեշտ զննական նյութերով:

**Գրադարան**

Երկրորդ հարկում տեղակայված է ընդարձակ գրադարանը, որը նորոգված է, ապահովված գեղարվեստական գրականության համար անհրաժեշտ պահարաններով, որոնք ներկառուցված են, և սենյակում ապահովված է աշակերտների ազատ և անվտանգ տեղաշարժը:

Կից առկա է մեթոդականամանկավարժական գրականության և դասագրքերի ստացման, պահեստավորման և բաշխման սենյակ:

Գրադարանը ևս ապահոված է ջրով, լվացարանով:

*Աղյուսակ 39*




Ցանկացած գրադարանի հիմնական ռեսուրսը նրա ֆոնդն է; Հետևաբար ֆոնդն է որոշում գրադարանի ընթերցողների բովանդակությունը, տեղեկատվական պահանջների զարգացումը:

Որակական տեսանկյունից գրագարանային հավաքածուն ներառում է՝

1. Հայ գեղարվեստական գրականություն՝ հիմնականում ծրագրային նյութով նախատեսված գրքերով
2. Տեղեկատվական գրականություն՝ բառարաններ, հանրագիտարաններ
3. Արտասահմանյան գրականություն
4. Մասամբ՝ ռուս գրականոթյուն

Գրադարանում առկա են նորաոճ գրադարակներ, գրադարանային հավաքածուն դասակարգված է բաժիններով:

Գրադարանում անհրաժեշտություն կա ֆոնդը լրացնել՝

1. Ժամանակակից գրականությամբ, ինչն էլ կխթանի ընթերցողի և գրադարանի միջև կապի ամրապնդմանը, ուժեղացմանը և զարգացմանը
2. Ուսումնամեթոդական գրքերով՝ մանկավարժների աշխատանքին արդյունավետություն տալու նպատակով
3. Քանակական տեսակետից գրադարանային ընդհանուր ֆոնդը քիչ է, ունի հարստացման անհրաժեշտություն:
4. Ընթերցողների պահանջների, տռեղեկատվական ինֆորմացիայի զարգացման համար անհրաժեշտ է ունենալ էլեկտրոնային գրադարան՝ ընթերցասրահի հագեցվածության համապատասխան գույքով և համակարգիչներով:

**Միջոցառումների դահլիճ**

Երկրորդ հարկում գործում է միջոցառումների դահլիճը՝ 200 նստատեղով՝ փափուկ աթոռներով: Ունենք միջոցառումները կազմակերպելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ:

Միջոցառումների դահլիճը ենթակա է ընթացիկ վերանորոգման:

**ՆԶՊ ԿԱԲԻՆԵՏ**

Ռազմագիտության դասերը դասավանդվում են ՆԶՊ առարկայի համար հատկացված կաբինետում, որտեղ առկա է ուսումնական զենքի համար առանձնացված սենյակ:

Ուսումնական զենքը արդիականությունը կորցրել է, անհրաժեշտ է էլեկտրոնային հրաձգարան, նոր ուսումնական զենք, գործնական պարապմունքների համար համապատասխան տարածք:

**Մանկավարժահոգեբանական աջակցության թիմի աշխատասենյակներ**

Աջակցության թիմն աշխատում է իրեն հատկացված աշխատասենյակներում՝ հոգեբանի, հատուկ մանկավարժի և ուսուցչի օգնականների երկու :

Կահավորված են, ըստ անհրաժեշտության՝ ապահովված խմելու ջրի և հետադարձ հոսքի պայմաններով: Ձեռք է բերվել որոշ գրականություն, յուրաքանչյուր ուսումնաան տարի ըստ պահանջարկի աջակցության թիմին տրամադրվում է անհրաժեշը գրենական պարագաներ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար համապատասխան միջավայրի, խելամիտ հարմարեցումների անհրաժեշտություն կա. սայլակ, քայլակ, լողական սարք, հարմարեցված գրենական պիտույքներ, անխոչընդոտ տեղաշարժն ապահովող ֆիզիկական միջավայր (դեղին գծեր, ուղենշող սալիկներ, տարածական կողմնորոշման ձայնային ազդաշնաններ, սայլակով) քայլակով տեղաշարժվող երեխայի համար՝ անխոչընդոտ պայմաններ, երկրորդ հարկ բարձրանալու հնարավորություն, մատչելի ուսումնական նյութեր՝ էլեկտրոնային, խոսող, բրայլյան տառատեսակներով, պարզեցված և հեշտ ընկալելի տեքստերով, ռելիեֆային նկարազարդումներով գրքեր և այլն):

**Ուսուցչանոց**

Ուսուցիչներն ունեն հանգստի և աշխատանքի համար պայմաններ՝ ուսուցչանոցում առկա է խմելու ջուր, առանձնացված սանհանգույց, փափուկ կահույք, ինտերնետ կապ, համակարգիչներ:

Ընդմիջում անելու համար ճաշարանում ուսուցիչների համար առանջնացված է անկյուն:

**Ընդունարան**
Գործավարական աշխատանքներն իրականացվում են ընդունարանում, առկա է ինտերնետ կապ, համակարգիչներ, տեսածրիչ սարք, տպիչ սարքեր, պատճենահանող սարք, համապատասխան կահույք:

**Աշխատասենյակներ**
Փոխտնօրենները և ԴԱԿ-ը ունեն աշխատելու համար առանձնացված պայմաններ: Դասղեկների խորհրդակցություններն անց են կացվում տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի, աշխորհրդի նիստերը՝ ԴԱԿ-ի աշխատասենյակներում:
Հաշվապահի սենյակը ապահոված է անհրաժեշտ գույքով, ինտերնետ կապով, համակարգչով, տպիչ սարքով:

**Պահակակետ**
Մուտքի մոտ գտնվում է պահակակետը, որը նույնպես ապահոված է գույքով:

**Սպասարկման սենյակներ**
Սպասարկման աշխատանքների համար առանձնացվծ են տեխնիկական սպասարկման օժանդակ տարածքներ՝ աստիճանահարթակների ստորին հատվածները առանձնացվել են որպես տեխնիկկան սպասարկման տարածքներ և հատկացվել հավաքարարներին՝ անհրաժեշտ գույք սարքավորումները, ինչպե նաև պարբերաբար իրենց տրամադրվող սանիիգիենիկ պարագաները պահպանելու նպատակով:

**Ռեկրեացիոն տարածքներ**
Գլխավոր նախասրահում տարիների ընթացքում ստեղծել ենք կանաչ անկյուն, որտեղ տեղակայված են հարմարավետ նստարաններ: Աշակերտները հաճույքով հանգստանում են դասամիջոցներին:
Դասասենյակներին հարող միջանցքները ընդարձակ են, լուսավոր, ապահովում են աշակերտների ազատ, անխոչընդոտ հոսքը:
Շենքից դուրս տարածքը և պարտեզները ենթակա են բարեկարգման, հանգստի զոնաների համար անհրաժեշտ գույքի ձեռքրման:

**Արխիվ**
Սահմանված կարգով փաստաթղթերը արխիվացվում են և պահպանվում առանձացված սենյակում՝ արխիվում:
Դպրոցի զանգը էլեկտրական է,բայց աշխատում է մեխանիկական՝ կոճակին հետևում է համապատասխան աշխատակիցը: Մտադրություն կա այն դարձնել էլեկտրոնային և ավտոմատ՝ դասական երաժշտության մեղեդիով:



Վերը նշված աշխատանքները և ձեռքբերումները շարունակական և հետևողական, պլանավորված տարիների աշխատանքի արդյունք են:
Դպրոցի շենքային և գույքային հնարավորություններն օգտագործվում են Լոռու մարզի դիմորդների (անցած տարիներին՝ նաև՝ հիմնական դպրցի շրջանավարտների) ավարտական կենտրոնացված, միասնական քննությունների կազմակերպման նպատակով՝ միասնական քննական համակարգով ԳԹԿ-ի կողմից կազմակերպված քննությունների անցկացման բոլոր տարիներին:

## ԲԱԺԻՆ 2
## ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

2-րդ բաժինը ձևավորվել է ըստ՝

- Ըստ §ՀՀ Կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրի¦ համապատասխան դրույթների:
- Ի կատարումն Հանրակրթության պետական չափորոշչի պահանջների:
- ՀՀ կառավարության 2023 թ. փետրվարի 16-ի N 216-Ն որոշման (Հավելված 1)՝ ՀՀ հիմնական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական պաշտոնների անվանացանկով ներառված պաշտոնային գործառույթների:
- Ըստ Բաժին 1-ի՝ մանրակրկիտ վերլուծության արդյունքում արտացոլված հիմնախնդիրների:
- Ըստ մանկավարժական, ծնողական և աշակերտական համակազմերի կողմից լրացված հարցաթերթիկներում ձևակերպված առաջարկների:
- Ըստ խորհրդակցական մարմինների հետ ունեցած հանդիպումներում հնչած առաջարկների:
- Ըստ դպրոցի տարբեր տարիների՝ դպրոցի գործունեությամբ հետաքրքրված և շարունակական կապը պահպանող շրջանավարտների առաջարկների:

***§Կրթության զարգացման տեսլականն է՝ յուրաքանչյուրն օժտված է որոշակի տաղանդով, և կրթության համակարգի առաքելությունն է բացահայտել և հնարավորին չափ զարգացնել յուրաքանչյուրի տաղանդը՝ ընդլայնելով իր երկրում սեփական բարեկեցությունն ապահովելու անհատի հնարավորությունները, որի երաշխավորը պետք է լինեն մրցունակ տնտեսությունն ու կայուն պետությունը¦:***

*ՀՀ Կրթության՝ մինչև 2030 թ.-ի զարգացման պետական ծրագիր,բաժին 2,կետ 75*

Զարգացման ծրագրի նպատակները փորձել ենք շարադրել ըստ ոլորտների՝ յուրաքանչյուր ոլորտում արժևորելով **որակն** ու **արդյունավետությունը**:

Զարգացման ծրագրի նպատակներն ու խնդիրները ձևակերպելիս զերծ ենք մնացել շենքային խոշոր հիմնախնդիրներ ներառելուց՝ հաշվի առնելով կառավարման նոր համակարգի անցնելուց հետո գործառութային փոփոխությունները, նյութական, գույքային, ուսումնանյութական բազայի վերաբերյալ խնդիրների լուծումը կկատարվի համագործակցային աշխատանքով՝ վարչական համակարգողի հետ միասին՝ առաջարկությունների և լրացուցիչ ֆինանսական միջոցների հայթայթման ուղիների որոնման, աջակցության, փոխգործակցության միջավայրում:



Զարգացման ծրագրի իրականացման գրավականը Հաստատության մանկավարժական աշխատողների համագործակցային աշխատանքն է, մասնակցայնության, բազմակարծության համար պայմանները, կոլեկտիվի անդամների բարոյահոգեբանական առողջ, կայուն, բարենպաստ մթնոլորտը: Որպես լոգոտիպ ընտրվել է դեպի

զարգացում տանող գունային ներդաշնակ անցումը՝ կարմիրը որպես ռիսկ, իսկ կանաչը՝ որպես վերջնական նպատակ: Աղյուսակի համապատասխան բաժինները ներկված են մեր կողմից ընտրված լոգոյին համապատասխան:

| Հ/Հ | ՆՊԱՏԱԿ | ԽՆԴԻՐՆԵՐ | ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԺԱՄ ԿԵՏ | ԱՆՀՐԱ-ԺԵՇՏ ՄԻՋՈՑ-ՆԵՐ | ԱՐԴՅՈՒՆՔ-ՆԵՐԻ ՉԱՓՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ-ՆԵՐ | ՌԻՍԿԵՐ | ՌԻՍԿԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹ ՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
